

Իրանահայ համայնք

Շնորհանդես, մեծարում

Կեանքից հեռացաւ
Սեպուհ Ամիրխանեանը



13 նոյեմբեր, 2011 Իրանահայեր Լրատու ցանց
Նոյեմբերի 13-ի երեկոյեան, վախճանեց Թեհրանի միակ
հայկական հրատարակչատան արտօնատեր Սեպուհ
Ամիրխանեանը:

Սեպուհ Ամիրխանեանը ծնւել էր 1940թ. Իրանի Արաք
քաղաքում, նախնական կրթութիւնն ստացել էր ծննդավայրում,
ապա շարունակել է աւարտել Թեհրանում: Մասնակցել է
աւարտել էր նաեւ Թ.Հ.Թ. առաջնորդարանում կայացող
Հայերէնագիտական դասարանները: Եօթը տարի, որպէս
ուսուցիչ, դասաւանդել է «Թունեան» դպրոցում:

Կարճ ժամանակով տպագրական գործում մասնագիտական
դասարանների է մասնակցել Գերմանիայում:

Երիտասարդ տարիքից զբաղւել է տպագրական գործերով,
հիմնականում «Անի» եւ «Մոդերն» տպարաններում:

1970թ. համագործակցութեան մէջ է մտել «Նայիրի»
գրախանութի եւ տպարանի հիմնադիր Սամուէլ
Մարութանեանի հետ եւ նոյն ժամանակ ստանձնել տպարանի
տնօրինութիւնը:

1986թ. «Նայիրի» տպարանը լրիօրէն անցնում է Սեպուհ
Ամիրխանեանին: Իսկ 1994թ. Ս. Ամիրխանեանի միջոցով հիմնւել
է «Նայիրի» հրատարակչութիւնը, որն մինչ այժմ աւելի քան 250
անուն գիրք է հրատարակել:

Սեպուհ Ամիրխանեանը նաեւ հրատարակել է «Նայիրի» պատի
(1954թ.-ից)

եւ գրպանի օրացոյցները: Նրա ջանքերով նաեւ 2004թ.-ին
հրատարակ է իջել «Նայիրի» տարեգրքի Ա գիրքը, որին
լրացնելու եկան Բ (2008) եւ Գ (2010) գրքերը:

Սեպուհ Ամիրխանեանը միշտ յատուկ գուրգուրանքով էր
մօտենում հայ գրքին եւ ներկա էր ամեն տեղ, ուր խօսք էր գնում
գրքի մասին...

Այս տխուր առիթով «Իրանահայեր» լրատուական ցանցի անունից
ի խորոց սրտէ ցաւակցում ենք նրա տիկնոջ, որդիներին,
հարազատներին եւ բարեկամներին:

Հողը թէթել լինի վրան...

Լույս ամսագրի խմբագրութիւնն իր խորին
ցավակցութիւնն է հայտնում Սեպուհ Միրխանյանի
ցավալի մահվան առիթով:



Յոկոտեմբերի 28-ի երեկոյան Թեհրանի Յայ
մարզամշակութային «Րաֆֆի» համալիրի, Յայկական
բարեգործական ընդհանուր միութեան եւ «Արաքս»
շաբաթաթերթի համատեղ նախաձեռնութեամբ ու
հովանավորութեամբ թեմի բարեխնամ առաջնորդ Տ.
Սեպուհ արք. Սարգսյանի, «Րաֆֆի» համալիրի «Սայաթ
Նովա» դահլիճում կայացավ իրանահայ վաստակավոր
ուսուցչուհի, տեսուչ, ազգային-հասարակական գործիչ,
ՀԲԸՄ-ի Իրանի մասնաճյուղի նախագահուհի՝ տկն.
Աստղիկ Բաբայանի հերթական գրքի՝ «Գրքերի
որբանոցը», շնորհանդեսը:

Ձեռնարկն սկսվեց Տերունական աղոթքով, ապա
ընթերցվեցին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ
ՀՀ Սփյուռքի նախարար տկն. Հրանուշ Յակոբյանի
ուղերձները, որոնք մեծ հուզմունք առաջացրին Ա.
Բաբայանի եւ հանդիսականների մոտ:

Ապա «Արաքս» շաբաթաթերթի խմբագիր Մովսէս
Քեշիշյանը շնորհավորելով հայ ժողովրդի երկու
կարեւորագույն տոները՝ Մշակույթի տոնն ու ՀՀ
անկախութեան 20-ամյակն, ասաց. «Այս շնորհանդեսը
պարզապէս մի պատրվակ է մեծարելու մի ազնիվ ու
նվիրյալ մշակույթի գործիչի, ուսուցչի, տեսուչի, գրողի ու
մարդու, ով հայուհուն վայել կեցվածքով ու տղամարդու
պէս պայքարեց իր կյանքի նպատակին հասնելու համար,
ահա թէ ինչու ընտրեցինք այս անվանումը օրվա համար.
Աստղիկ Բաբայան՝ տեսուչը, գրողը, մտադրը»:

Այնուհետ հերթաբար իրենց ելույթներով հանդես եկան
«Րաֆֆի» համալիրի նախագահ Վարդան
Բաբախանյանը, ՀԲԸՄ խոսնակ Աիդա Սողոմոնյանը,
Թեհրանի ազատ համալսարանի հայոց լեզվի դասախոս
Քարմեն Ազարյանը, Ռուբեն Ավագյանը, Իրանահայ
գրողների միութեան նախագահ Թորգոմ Տեր-Յակոբյանը,
Սրբազան հայրը եւ «Թովմասյան» միջնակարգ դպրոցի
փոխտեսուչ Հրանուշ Սարգսյանը:

Միջոցառումը համեմված էր նաեւ գեղարվեստական
բաժնով, ուր վարպետորէն ասումըքեցին ժողգէֆ
Ամիրյանն ու Արթին Բաղումյանը:

Ծրագրի վերջին բաժնում ՀՄՍ «Րաֆֆի» համալիրի եւ
ՀԲԸՄ Վարչութիւնների կողմից գնահատագրեր եւ
նվերներ հանձնվեց Ա. Բաբայանին, որից հետո Աստղիկ
Բաբայանը հուզումնախառն իր սրտագին
շնորհակալութիւններն հայտնեց շնորհանդեսը
կազմակերպող կառույցներին, Սրբազան հորը,
ուղերձներ հողղներին, մանավանդ Ամենայն հայոց
հայրապետին, ՀՀ Սփյուռքի նախարարին եւ բոլոր
նրանց, ովքեր դեր էին ունեցել այս ձեռնարկի կայացման

մեջ: Վերջում ներկաները հյուրասիրվեցին «Րաֆֆի» համալիրի եւ ՅԲԸՍ շնորհաշատ կանանց խմբերի համատեղ ջանքերով պատրաստված կոկտեյլներով:

Միջոցառմանը ներկա էին նաեւ Մակար վրդ. Աշգարյանը, ազգային հասարակական կառույցների, միությունների եւ մամուլի ներկայացուցիչներ ու հոծ բազմություն:

Հիշեցնենք, որ Ա. Բաբայանի առաջին գիրքը՝ «Իրական դեպքեր», լույս է տեսել 2001թ., որին եկել են լրացնելու «Ժամանակը սահում է եւ ...», «Ներքին ծայրը, որ...», «Ակրոստիքոսներ», «Արծաթ գօտու հետքերով», «Ակրոստիքոսներ 2» եւ «Գրքերի որբանցը»:

Անորակ շինություն թե՛ Անպատասխանատու վերաբերմունք



Ով է պատասխանատու Թեմականը թե կապալառուն

13 Նոյ., 2011 «Արաքս» շաբաթաթերթ

«Վթարային վիճակից փրկելու» նպատակով հիմնովին վերակառուցված Թեհրանի հայոց «Թունյան» տարրական աղջկանց դպրոցը ամեն օր մի նոր խնդրի առջեւ է կանգնում:

Մեկ կողմից ջեռուցման չկարգավորվելու խնդիրը, իսկ մյուս կողմից կախովի առաստաղների (կեղծ առաստաղների) թափվելը, խոնավության հետեւանքով, խիստ մտահոգում է բոլորին:

Այսօր առավոտյան, երբ կրկին սկսեց անձրեւի տեղումը, դպրոցի մոտ կուտակվեցին աշակերտների ծնողները, մտահոգ վիճակում: Նրանք եկել էին ժամից շուտ իրենց դուստրերին տուն տանելու, վախենալով, որ դարձյալ թափվելու է կախովի առաստաղները:

Դպրոցի փոխտեսչուհի տկն. Շաքե Ավետյանը, որը նաեւ Պատգամավորական ժողովի դիվանի անդամ է, ընդամենը մի քանի օր առաջ, վստահեցնում էր, որ «Թունեանում հիմնական խնդիրներ չը կան և հաւանական որևէ լուրջ վտանգի դեպքում, հարցը կը լուծվի մինչև պատահարները», սակայն նոր դեպքերն ապացուցեցին փոխտեսչուհու վստահեցումների անլրջությունը: Վերջին տեղումներից հետո թափվեցին դասարանների մեծ մասի կախովի առաստաղները:

Քաղաքապետարանից եւ ԹՀԹ առաջնորդարանից այսօր ներկայացուցիչներ էին այցելել նորակառույց դպրոցի վիճակը գնահատելու համար:

Ըստ երեւույթի Թեմական խորհրդի անդամները արդեն համոզվել են, որ չի կարելի նույն կերպ շարունակել ուստի դպրոցը մինչև շաբաթ օրն արձակ է հայտարարվել եւ ասվում է, որ մինչ վերջնական կարգավորումը աշակերտությունը կտեղավորվի այլ դպրոցում:

Հիշեցնենք, որ դպրոցի շինության ընթացքում արձանագրվել է ոչ միայն հաշվետվության անհստակություններ այլ նաեւ

գործի որակագրկում, վերջին պարագան հաստատեց նաեւ Թեմական խորհրդի անդամ և Շինարարական մարմնի հետ կապ Ռուբիկ Մարխոշյանը:

Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի վերանորոգւած զանգակատան օրհնութիւնը



Նոյ. 7-ին Ս. Ստեփանոս Նախավկայի վանքում համախմբւած ուխտատուների ներկայութեամբ կատարեց առաւօտեան ժամերգություն եւ օրհնւեց չորս ամբողջ ամիսներ տքնաջան աշխատանքի արդիւնքում ամբողջովին վերանորոգւած զանգակատունը, որից էլ հնչեցին զանգի հոգեպարար դօղանջները...

Առաւօտեան ժամերգութիւնը կատարեց Ատրպատականի հայոց թեմի հոգեւոր հովիւ Ս. Վաղինակ վրդ. Մելոյեանը: Ժամերգութեանը մասնակցում էր Ուրմիայի շրջանի քահանայ Ս. Ներսէս Պասիլեանը: Զանգակատան օրհնութեան ժամերգութեան աւարտին օրհնութեան խօսքով արտայայտեց Հայր Սուրբը: Նա իր խօսքի վերջում անորադարձաւ Ս. Ստեփանոս Նախավկայի եւ Նախասարկաւազի կեանքին ու գործունէութեանը:

Նախքան ժամերգութիւնը եւ ժամերգութեան աւարտից յետոյ՝ վանքին կից շինութիւնում Իրանի Եկեղեցիների կենտրոնի ընդհանուր տնօրէն Շերի Աւետեանի միջոցով դիմատուրեցին ու հիւրընկալեցին Ս. Վաղինակ վրդ. Մելոյեանը, Ս. Ներսէս քնյ. Պասիլեանը, ոչ- պաշտօնական այցով վանքում գտնուող Իրանում Հայաստանի փոխդեսպան պրն. Քաղդասարեանը, Ատրպատականի հայոց թեմի Պատգ. ժողովի եւ Թեմական խորհրդի անդամները, նահանգի Մշակութային ժառանգութեան կազմակերպութեան պատասխանատուները եւ զանգակատունը վերանորոգող Հայաստանից Իրանում գտնուող երկու վարպետ ճարտարապետները, եղան գնահատանքի եւ շնորհակալական արտայայտութիւններ ու յուշանւերների յանձնում, որոնց մասին կանդաղադռանք առանձին թղթակցութեամբ:

Շայաստան

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Լույս» ամսագրի եւ «Ապագա» հանդեսի խմբագրություններն ու աշխատակիցները իրենց խորագրաց ցավակցություններն է հայտնում ՀՀ Սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանին՝ իր սիրելի հոր՝

Հրանտ Խաչատուրի Հակոբյանի

մահվան կապակցությամբ:

12 ՄԻԼԻՈՆ 286 ՐԱԶԱՐ 478 ԴՈՒՆՐ՝ ԱՐՑԱՆԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆԸ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի 14-րդ հեռուստամարաթոնի ընթացքում, որ մեկնարկեց նոյեմբերի 24-ի երեկոյան ժամը 20-ին եւ ավարտվեց հաջորդ առավոտյան ժամը 8-ին, հավաքվել է 12 մլն 286 հզ. 478 դոլար: Նախորդ տարվա «Տուրը կյանք է» խորագրով հեռուստամարաթոնի ժամանակ հավաքվել էր ավելի քան 20 մլն դոլար:

Հեռուստամարաթոնը հեռարձակվում էր Լուս Անջելեսից՝ կաբելային, արբանյակային կապուղիներով, ինտերնետով, ինչպես նաեւ հայաստանյան մի շարք հեռուստաընկերությունների եթերով:

Հավաքված գումարը նախատեսված է Արցախի ջրամատակարարման համար: Հավաքված գումարը կարող է էականորեն աճել դեկտեմբերի կեսերին Մոսկվայում կայանալիք ավանդական ճաշկերույթից հետո, որ տրվում է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի կողմից՝ ռուսաստանաբնակ հայ գործարարների հետ:

Ադրբեջանը 7 զոհ է տվել. Արցախի բանակ



Համաձայն ՊԲ օպերատիվ տվյալների անցած շաբաթվա ընթացքում դարաբաղա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում հակառակորդի կողմից հրադադարի պահպանման ռեժիմը խախտվել է շուրջ 270 անգամ: Ադրբեջանական բանակի առաջապահ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից դարաբաղյան դիրքերի ուղղությամբ արձակել են ավելի քան 1500 կրակոց: Առավել ինտենսիվ խախտումներ են արձանագրվել հատկապես նոյեմբերի 20-ին, 22-ին և 23-ին, որոնց ընթացքում բացի ավտոմատ զինատեսակներից, հակառակորդը բավականին մեծ հաճախականությամբ կիրառել է նաև հեռահար դիպուկահարային հրացաններ: Անցած 7 օրերի ընթացքում, միայն «ՇԵՎ», «Սև Նետ» և «Իստիգլալ» դիպուկահար հրացաններից, ադրբեջանական կողմն արձակել է մոտ 250 թիրախային կրակոց:

Ադրբեջանական զինված ուժերի կողմից շփման գծի ողջ երկարությամբ ծավալած վերոնշյալ նախահարձակ գործողությունները մեկ անգամ ևս փաստում են, որ պաշտոնական Բաքուն ոչ միայն չի հարգում հակամարտության խղաղ կարգավորման ուղղված միջազգային ջանքերը, այլև նպատակային բաղյեր է ձեռնարկում շփման գծում լարվածությունը խորացնելու ուղղությամբ: Հանգամանք, որը դարաբաղյան կողմին ստիպում է իր ընթացիկ և հետագա գործողություններում լինել ավելի կոշտ, իսկ պատասխաններում՝ համարժեք:

Հարկ է ընդգծել, որ միայն անցած շաբաթվա ընթացքում, ի պատասխան նոյեմբերի 19-ին և 20-ին առաջնային գծում հակառակորդի նախահարձակ գործողությունների արդյունքում ՊԲ-ի կրած երկու զինվորի կորստի, հայկական կողմը, ինչպես և նախապես զգուշացրել էր, դիմել է պատժիչ գործողությունների: Ըստ ՊԲ հետախուզության տվյալների, նոյեմբերի 20-ից 25-ն

ընկած ժամանակահատվածում ադրբեջանական բանակի առաջապահ ստորաբաժանումները դարաբաղյան ուժերի կողմից ձեռնարկած կանխարգելիչ գործողությունների արդյունքում տվել են մինչև 7 զոհ և վիրավոր: Ակնհայտ է, որ ներքաղաքական և ներհասարակական ընդվզումներից երկիրն ու սեփական զինուժը գեթ պահելու համար, պաշտոնական Բաքուն ձեռնպահ է մտնում վերոնշյալ փաստերը հրապարակավ ներկայացնելուց: Սակայն ըստ հավաստի աղբյուրների, տվյալ երկրի իշխանությունները կատարվածի շուրջ պաշտպանության նախարարությունից պահանջում են կոնկրետ պարզաբանումներ և բացատրություններ:

ՊԲ Լրատվության և քարոզչության բաժին

HayNews.am

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ ՓՐԿԵԼ... ԻՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՆԱՔԵՐԻՑ

80-ականների վերջերին Նկարիչների միությունն ավարտել էր նոր մասնաշենքի շինարարությունը: Որոշակի հարդարման աշխատանքների ավարտից հետո նոր մասնաշենքում գործելու էին ցուցասրահներ, կոնֆերենս-դահլիճներ: Միության տան ներկայիս հատակագիծը մոտավորապես 2 հազար քմ է: Նոր մասնաշենքը կրկնակի մեծ էր: Տարածքը թույլ կտար լայնամասշտաբ ցուցադրություններ, մշակութային հանդիսություններ կազմակերպել: Սակայն 90-ականներին Նկարիչների միության այն ժամանակվա ղեկավարությունը տարածքը վաճառեց: Նկարիչների միության ներկա նախագահ Կարեն Աղամյանը հիշում է, որ տարածքը վաճառվել է 20.000 դոլարով: «Գործարքն իրականացվել է միանձնյա որոշմամբ, ժողով չի գումարվել, եւ միության այն ժամանակվա անդամներն իրենց թույլտվությունը չեն տվել: Հետագայում պարզվել է, որ գործարքի իրականացման համար կաշառք է տրվել: Ավելի ուշ քրեական գործ հարուցվեց միության ղեկավարի դեմ», ասում է Աղամյանը: Վերջին 20 տարվա ընթացքում տարածքը մի քանի անգամ վերավաճառվեց եւ այսօր պատկանում է իրանական կազմակերպության, որը ցանկանում է տարածքում 50-հարկանի «էլիտար» շինություն կառուցել: Ազնավուրի անվան հրապարակի հարեւանությամբ իրանական «թաուներ» կառուցելու ճարտարապետական առաջադրանքը տվել է մայրաքաղաքի նախկին գլխավոր ճարտարապետ Սամվել Դանիելյանը: Փաստաթղթում առկա է նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի ստորագրությունը: Երեւանի քաղաքապետարանի ավագանու քաղաքաշինության հանձնաժողովի նախագահ Հրաչ Պողոսյանը, իդուն կատարելով մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանին, շեշտում է, որ նախկին քաղաքապետը փաստաթուղթը ստորագրել է առանց քաղաքաշինական խորհրդի հետ քննարկման:

«Դանիելյանի կարծիքով՝ այնպես են արել, որ շենքն այնքան էլ բարձր չլինի, եւ տվել են 25 հարկի առաջադրանք: Իսկ առաջադրանք ասվածը նշանակում է, որ մյուս կողմը կարող է սկսել նախագծային աշխատանքները հույս ունենալով, որ այն կյանքի կկոչվի», ասում է Հրաչ Պողոսյանը:

«Այդ տարածքում մասնատիպ կառույցի շինարարությունն անհնար է, քանի որ հարակից շենքերի բարձրությունը չպետք է գերազանցի կինոթատրոնի բարձրությանը: Ավելին, Երեւանը գերծանաբեռնված է: Մայրաքաղաքի համար ոչ միայն 50, այլև 25-հարկանի շինությունն անթույլատրելի է, որովհետեւ հողն այդքան ռեսուրս չունի: Երեւանի սիրտն այն տեղը չէ, որտեղ պետք է իրանական կենտրոն կառուցվի», շեշտում է ճարտարապետների միության նախագահ Սկրտիչ

Մինասյանը: Նրա փոխանցմամբ՝ գործ ունենք իրանական ընկերությունից շրջանառության դրված նախագծի հետ:

Իրավական տեսակետից բարդ իրավիճակ է ստեղծվել, ճարտարապետական առաջադրանքը տրված է, հողն էլ իրանական կողմի սեփականությունն է:

Սա թերևս եզակի դեպքերից է, երբ ճարտարապետների միությունը, քաղաքապետարանի քաղաքաշինական խորհուրդն ու գլխավոր ճարտարապետը համակարծիք են՝ շենքի կառուցումը, թեկուզե 25 հարկի տեսքով, անթույլատրելի է: Սկրտիչ Մինասյանի ներկայացմամբ՝ գոյություն ունեն մեկ բարոյական հարցեր:

Մինասյանը հիշեցնում է, որ 5 տարի առաջ էլ էր իրանական կողմը նույն վայրում կառուցապատման նմանատիպ ծրագիր ներկայացրել, սակայն արժանացել է քաղաքաշինական խորհրդի մերժմանը: Այս նախագիծն էլ կարժանանա նախորդի ճակատագրին, եթե հաշվի առնվի, որ ճարտարապետական առաջադրանքն ուժը կորցրել է: «Առաջադրանքը տրվել է 2009-ին, սակայն 2 տարի անց ճանաչվում է ուժը կորցրած, եւ անպայման պետք է այնպես անել, որ որոշումը չվերակենդանացվի ո՛չ 20, ո՛չ էլ 10-հարկանի կառույցի տեսքով»:

Թեպետ գլխավոր ճարտարապետը հայտարարել է, որ վերոնշյալ նախագիծը պետք է քննարկվի, սակայն Մինասյանը հավելում է, որ այստեղ քննարկելու ոչինչ չկա: Անհրաժեշտ է բացասական պատասխան տալ ու մայրաքաղաքը փրկել 50-հարկանի «էլիտար» երկնաքերից:

Չայ մարզիկը հաղթեց թուրքին և աղբբեջանցուն ու ծածանեց Չայոց Եռագույնը



Այկիկենդո կարատեի Չայաստանի հավաքականն օրերս վերադարձել է հոկտեմբերի 25-31-ը Յուսիսային Կիպրոսում կայացած Եվրոպայի կոնտակտային տաեկվոնդոյի առաջնությունից: Մեր մարզիկները փայլուն են հանդես եկել: Մինչև 18 տարեկանների այս առաջնությունում 14-15 տարեկանների մրցությունում առաջին տեղ է զբաղեցրել Անդրանիկ Յախսյանը, 12-13 տարեկանների մրցությունում հաղթել է Էդվին Ավագյանը, 10-11 տարեկանների կարգում երկրորդ տեղն է նվաճել Սմբատ Սիրավյանը: Սակայն ամենահետաքրքիր ու հիշարժանն է եղել 16-17 տարեկանների մրցությունը, որտեղ Մարտին Ավագյանը համառ պայքարում պարտության է մատնել աղբբեջանցի Մուհեթեմ Չասսանովին և բարձր ծածանել հայոց եռագույնը պատվո հարթակում: Չետաքրքրական է նաև այն, որ Մարտինը կիսաեզրափակիչում հանդիպել է Յուսիսային Կիպրոսում բնակվող թուրք մարզիկի հետ և հաղթել է նրան: «Մեր հաջողությունները հավաքական ուժի վառ դրսևորում են:

Առաջիկայում՝ դեկտեմբերի 2-13-ը մասնակցելու ենք Գերմանիայում կայանալիք Կոնտակտային մենամարտերի Եվրոպայի առաջնությանը, որտեղ, կարծում են, նույնպես հաջողություններ կունենաք»,- պատմեց Այկիկենդո կարատեի հայաստանյան ֆեդերացիայի նախագահ Դավիթ Աթանեսյանը: **HayNews.am**

Չայաստանը դեմ է քվեարկել հակաիրանական փաստաթղթին

Ինչպես արդեն նշել էինք, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունել է մի բանաձև՝ «Ահաբեկչական հարձակումները միջազգային պաշտպանություն ունեցող անձանց վրա» վերնագրով, որը դատապարտում է դիվանագիտական պաշտպանություն ունեցող անձանց վրա ակաբեկչական գործողությունները: Չակաիրանական փաստաթղթի ընդունումը նախաձեռնել է Սաուդյան Արաբիան: Չակաիրանական փաստաթղթին կողմ է քվեարկել 193 պատվիրակություններից 106-ը, դեմ՝ 9-ը, ձեռնպահ մնացել է 40 երկիր:

Չայաստանը, Բոլիվիան, Կուբան, Յուսիսային Կորեան, Էկվադորը, Նիկարագուան, Վենեսուելան և Չամբիան դեմ են քվեարկել փաստաթղթի ընդունմանը: Ռուսաստանը ձեռնպահ է մնացել: Այս մասին հայտնում է msnbc.com կայքը: Յիշեցնենք, որ ավելի վաղ Իրանի Իսլամական Չանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեջադը հայտարարել էր, որ Իրանի կառավարության հասցեին մեղադրանքները անսիմս են և շինծու: **HayNews.am**

Արեւմտյան Շայաստան

Վերականգնելով հայկական եկեղեցին՝ թուրքերը վերանորոգեցին իրենց խիղճը. Դիարբեքիի քաղաքապետ



HayNews.am. 15-11-2011- Վերականգնելով Մերձավոր Արևելքում ամենամեծ հայկական եկեղեցին՝ թուրքերը վերանորոգեցին իրենց խիղճը: Նման հայտարարությամբ է հանդես եկել Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրը ,Դիարբեքի, տնտեսական և հասարակական պատմության շուրջն համաժողովի ժամանակ: Ինչպես հայտնում են տեղական լրատվամիջոցները, Բայդեմիրը իր խոսքում նաև անդրադարձել է այն հայերին, ովքեր կարևոր դեր են ունեցել Դիարբեքիի պատմության մեջ: Բայդեմիրը հայտարարել է, Առանց քո անցյալը ճանաչելու և նրա աչքերի մեջ նայելու հնարավոր չէ կառուցել պայծառ և ազատ ապագա: Թուրք պրոֆեսոր Բասկին Օրանը իր հերթին նշել է, որ 1915 թվականը դարձավ խորքային թուրքական պետության առաջին գործողությունը, և, որ հետագայում ևս հայերին թույլ չտրվեց վերադառնալ և տեր կանգնել իրենց ունեցվածքին: Միջոցառմանը մասնակցել են նաև մտավորականներ, Արդարություն և զարգացում կուսակցության պատգամավորներ, և այլ նշանավոր անձինք:

Թուրքիայում շարունակվում է եկեղեցիների պղծումը

Թուրքիայի երզնկա քաղաքում մուսուլմանները Սուրբ Սոֆիայի տաճարը, որտեղ տեղի է ունեցել Նիկեյայի Տիեզերական ժողովը, վեր են ածել մզկիթի: Այդ տաճարը կառուցվել է VI դ. Նիկեյա քաղաքում բյուզանդական կայսր Յուստինիանոս I կողմից: 1331 թ., երբ թուրքերը գրավեցին այդ քաղաքը, նրանք տաճարը

վերածեցին մզկիթի, սակայն 1922 թ. տաճարում բռնկված հրդեհը գրեթե ամբողջությամբ ոչնչացրել էր այն: Միայն 2007 թ, երբ հաջողվեց վերականգնել սուրբ Սոֆիայի տաճարը, հազարավոր քրիստոնյա ուխտագնացներ և զբոսաշրջիկներ սկսել էին այցելել այնտեղ: Դուրբան-բայրամի տոնակատարության ժամանակ, Թուրքիայի մուսուլմանները կրկին տաճարը վեր են ածել մզկիթի: Թուրքիայի իշխանությունների այդ որոշումը խիստ քննադատության է արժանացել ոչ միայն քրիստոնյաների, այլև իսլամական փորձագետների կողմից:

800 ՀԱՉԱՐ ՕՍՄԱՆՅԱՆ ՈՍԿԵՐԿԱՍ ՇՎԵՅՏԱՐԱԿԱՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Ո՞ւմ էր պատկանում, ինչպե՞ս է ձեռք բերվել այդ հարստությունը եւ ի՞նչ միջոցներով է Ելյազիզից փոխադրվել Շվեյցարիա

Որքան էլ ժխտողականության հարցում թուրք հասարակությունը համերաշխ լինի թուրքական իշխանությունների հետ, այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ամեն մի դրսեւորում հավասարակշռությունից հանում է թե մեկին եւ թե մյուսին: Հիվանդագին երեւակայությունը դառնում է նրանց բնորոշ գիծը: Դա պատահական չէ, այլ հանցագործի հոգեբանության հետեւանք, որովհետեւ ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքը բացառապես շրջափակված էր հայ ժողովրդի դահիճներով, իսկ ընչաքաղց թուրքական ժողովրդական զանգվածներն անմիջականորեն մասնակցել էին Հայոց ցեղասպանությանը: Մեծ եղեռնի 100-րդ տարելիցն ավելի է բորբոքում թուրքերի հիվանդագին երեւակայությունը, նրանք սկսում են ակտիվացնել հայկական դավադրության որոնումները:

Որոնումների պարագայում խոսքը Ելյազիզի գործարար Սահդ Ալի Բայրաքի հոր շվեյցարական Credit Suisse բանկում պահվող 800 հազար օսմանյան ոսկեդրամի մասին է: 6 տոննա կշռող այդ ոսկեդրամները բանկին են հանձնվել 1980-ի սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջման նախօրեին, շվեյցարական բանկը հայտարարել է, որ ոսկիների աղբյուրն անհայտ է, խարդախության հոտ է փչում դրանից:

Սակայն Անկարայի համալսարանի պրոֆ. Չաղըր Էրիհանը փոխանակ մտածելու, թե 6 տոննա քաշ ունեցող 800 հազար ոսկեդրամն ի՞նչ հանգամանքներում է հայտնվել Ելյազիզի գործարար Բայրաքի հոր ձեռքում, ինչո՞ւ եւ ի՞նչ միջոցներով ու ճանապարհով է հասել Շվեյցարիա, մտահոգություն է հայտնում, թե Բայրաքը որպես ժառանգ տարիներ շարունակ, պայքարելով հանդերձ, չի կարողանում բանկից ստանալ իր հոր ոսկիները, ապա եւ ավելացնում. «Հետաքրքրական է, «աղբյուրն անհայտ», այս ոսկիներից խարդախության հոտը փչելու մասին արտահայտվելիս, ի՞նչ նկատառումներով է առաջնորդվել շվեյցարական բանկը»:

Ի դեպ, Ելյազիզի ոսկիների հարցը հոկտեմբերի 17-ի համարում արծարծվել էր «Միլլիեթ» թերթում: Համենայն դեպս, պրոֆ. Էրիհանի «Թյուրքիե» թերթի նոյեմբերի 8-ի համարում հրապարակված հոդվածը, որն արտատպել է Ստամբուլի «Հայթերթ» կայքէջը, հետաքրքրական է: Ահա թե ինչ է գրել. «Ելյազիզի գործարար Սահդ Ալի Բայրաքը տարիներ շարունակ պայքարում է, որ շվեյցարական բանկից ստանա հորից ժառանգած 800 հազար օսմանյան ոսկեդրամը: Թուրքիայում Շվեյցարիայի դեսպան Ռայմոնդ Կունցը, ստացած հրավերին

համապատասխան, Ելյազիզում հանդիպել էր Բայրաքի հետ եւ քննարկել ոսկիների ճակատագիրը:

Մի՞թե այս պատմությունը չափից դուրս տարօրինակ չէ: Մի կողմ թողած այն հարցը, թե 6 տոննա կշռող այս ոսկիները ինչպես են փոխադրվել Շվեյցարիա, ուզում եմ հարցնել: «Ո՞րն է 800 հազար օսմանյան ոսկիների աղբյուրը»:

Ելյազիզի քաղաքացու հանգուցյալ հայրը «նացիստական ոսկիները որպես ավանդ ընդունող Շվեյցարիան կընդունի նաեւ իմ ոսկիները» տրամաբանությամբ դրանք հանձնել է բանկ: Սակայն չկասկածեք, որ այդպիսի ոչ մի առիթ բաց չթողնող հայկական լրբբին արդեն լուսաբանի տակ վերցրած պետք է լինի շվեյցարական բանկերում պահվող «աղբյուրն անհայտ» Ելյազիզի ոսկիները:

Հոկտեմբերի վերջերին Ելյազիզում բնակվող մեր քաղաքացին հայտարարելով իր հոր ունեցած 800 հազար օսմանյան ոսկեդրամի մասին, իսկույն հայտնվել էր օրակարգում: Ավելին, Շվեյցարիայի դեսպանն այցելել էր նրան, նույնիսկ ոսկիների վերադարձման համար միջամտել էր վարչապետ Էրդողանը:

Ըստ մեր քաղաքացու, նրա հայրը 1980-ի սեպտեմբերի 12-ի հեղաշրջման նախօրեին 6 տոննա կշռող այս ոսկիները ցամաքային ու ծովային ճանապարհներով հասցրել էր Շվեյցարիա: Նշեն, որ 800 հազար օսմանյան ոսկու արժեքը ներկայումս 4 մլրդ լիրա է կազմում (մոտ 3,5 մլրդ դոլար):

Հենց թերթում կարդացի ոսկիների մասին, զգացի, որ այստեղ տարօրինակ բան կա: Մեկը 800 հազար օսմանյան ոսկեդրամ ունենա, առանց Թուրքիայում կամ արտասահմանում ներդրում կատարելու պահի մինչեւ 1980 թ., ապա նախապես «իրազեկվի» սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջման մասին եւ հեղաշրջումից մի քանի օր առաջ դուրս հանի Թուրքիայից:

Որքան ինձ հայտնի է, Թուրքիայի Հանրապետության առաջին շրջանում ոչ ոք «առձեռն» այդպիսի գումար չի ունեցել: 1924-ին հիմնադրված IS բանկի կապիտալը 250 հազար լիրա է, իսկ անգլիացիները Մոսուլից հրաժարվելու համար 1926-ին 500 հազար լիրա էին առաջակել Թուրքիային, որը չընդունվեց: Այսինքն խնդրո առարկա գումարը պետությունից գաղտնի տարիներ շարունակ պահելն անգամ ինքնին մեծ խնդիր է:

Մեր քաղաքացու վկայությամբ, նրա հայրը 6 տոննա կշռող ոսկե դրամները թաքցրել է «իրենց տան տակ փորած փոսում»: Եթե այս գումարը վերջինը վաստակել է շնորհիվ առեւտրի, ապա հանրապետության շրջանում օսմանյան ոսկեդրամով ինչպե՞ս է առեւտուր արել: Ինչո՞ւ այսքան մեծ ծավալի առեւտրի դիմաց չի հայտնվել հարկատուների ցուցակում: Ինչո՞ւ է թաքցրել գումարը կամ ինչո՞ւ չի փոխանակել, չի դրել թուրքական բանկում, ներդրում չի արել եւ գործարան չի կառուցել: Գուցե այս ոսկեդրամների աղբյուրն իսկապես խնդրահարույց է:

Երբ մեր քաղաքացու հանգուցյալ հայրը մտածում էր «նացիստական ոսկիները պահող Շվեյցարիան կպահի նաեւ իմ ոսկիները», մի՞թե չգիտեր, որ այդ ոսկիները հրեաների էր պատկանում, այլ ոչ թե նացիստներին: Միլիոնավոր մարդկանց համակենտրոնացման ճամբարներում ոչնչացնող նացիստներն առգրավել էին իրենց զոհերի ունեցվածքը եւ հատուկ հետաքրքրություն ցուցաբերել ոսկիների նկատմամբ: Ի դեպ, 90-ականներին նացիստների առգրաված ոսկիների շվեյցարական բանկերում պահպանման շուրջը քաղաքական փոթորիկ էր բարձրացել: Այդ ոսկիների հետ կապված շվեյցարական բանկերը ստիպված էին

Ֆինանսական որոշ գաղտնիքներ հայտնել ԱՄՆ-ին ու Անգլիային: «Հոլոքոսթի զոհերի» անունը կրող բազմաթիվ կազմակերպություններ ընկել են այս ոսկիների հետեւից: Առեղծվածն առ այսօր չի բացահայտվել: Դեռ դատավարություններն էլ շարունակվում են:

Ահա թե ինչո՞ւ էին զարմացել, կարդալով 800 հազար օսմանյան ոսկեդրամի մասին: Եթե այդ ոսկիները շվեյցարական բանկերում դրվել են «նացիստական ոսկիների» օրինակով, ապա այս գումարի աղբյուրն անհայտ լինելու առումով պետք է տեղիք տա լուրջ մտահոգության: Թալեաթ փաշան «Գաղտնի թղթածրարում» 1915-ին Մամուրաթուլազիզից (Էյլազիզ) տեղահանված հայերի թիվը 70 հազար է նշում: Այդ հայերից ոչ մեկն այլևս Էյլազիզ չվերադարձավ: Տեղահանվել են նաև քաղաքի ունեւոր հայ ընտանիքները: Գրեթե յուրաքանչյուր հայ ընտանիք «տեղահանությունից հետո վերադառնալու» հույսով փոխանակ ունեցած ոսկին իր հետ վեցնելու, թողել է մահմեդական վստահելի հարեւանի մոտ կամ թաղել ապահով մի տեղ, ինչի մասին տարիներ շարունակ բերնեբերան պատմում են: Այդպիսի պատմություններ պատմում են նաև Արեւելյան Անատոլիայի այլ քաղաքներում: Ավելին, ԱՄՆ-ի քաղաքացի բազմաթիվ հայեր իրենց պապերի թաղած ոսկիները գտնելու նկատառումով հաճախ են այցելում այս շրջանները:

2015-ին լրանում է այսպես կոչված Չայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Չայերը կարելուր նշանակություն են տալիս այդ տարելիցին: Կասկածից վեր է, որ այդ առումով որեւէ առիթ բաց չթողնող հայկական լրբքին արդեն լուսարծակի տակ վերցրած պետք է լինի «աղբյուրն անհայտ» այս ոսկիները: Էլ չենք խոսում շվեյցարական Credit Suisse բանկի մասին, որը հայտարարում է. «Ոսկիները խնդրահարույց են: Խարդախության հոտ է փչում»: Չետեաբար չի կարելի վարչապետին խառնել այսպիսի մութ գործերի մեջ, որի ծայրը քիչ թե շատ հայտնի է, թե ո՞ւր է տանելու: Առավել եւս չի կարելի վարչապետին դնել այնպիսի իրավիճակում, որ նա հայտնվի «աղբյուրն անհայտ» գումարի հետեւից ընկնողի կարգավիճակում, ինչը, հեղինակության առումով, Թուրքիայի համար կարող է լուրջ խնդիր դառնալ առաջիկայում»:

ՀԱԿՈՐ ՉԱՔՐՅԱՆ-Ազգ

Դերսիմի Ներողությանը հաջորդելու է Չայոց ցեղասպանությունը. թուրք ազգայնականներ



Թուրքիայում չեն դադարում քննադատել վարչապետ Թայիփ Էրդողանին, ով «համարձակվել» էր Ներողություն խնդրել Դերսիմի կոտորածների համար: Սյա անգամ քննադատողի դերում է հանդես եկել «Ազգայնական շարժում» խորհրդարանական կուսակցության անդամ, պատգամավոր Օզջան Ենիչերին: Ենիչերին Էրդողանի խոսքերը բնորոշել է որպես հարված

Աթաթուրքին, հանրապետականությանն ու թուրք ժողովրդին: Հիշեցնե՞ք, որ Էրդողանը, անդրադառնալով 1937-38 թթ-ին Դերսիմում իրականացված կոտորածներին, նշել էր, թե «եթե հարկավոր է, ապա իբևը պետության անուկից Ներողություն է խնդրում «այդ դեպքերի» համար»: «Այժմ էլ հերթում են Չայոց ցեղասպանության, Սեպտեմբերի 6-7-ի դեպքերի, Իզմիրի հրդեհը և այլն...»,-նշել է ազգայնական պատգամավորը՝ ակնարկելով, որ Էրդողանը կարող է Ներողություն խնդրել նաև այդ դեպքերի համար: HayNews.am

ՄՓՅՈՒՈՔ

Իրաքում ընդհանուր առմամբ մնացել է շուրջ 10 հազար հայ



News.am. 30-11-2011- Իրաքում հայ համայնքի շատ ներկայացուցիչներ իրաքյան պատերազմի ժամանակ լքեցին այդ երկիրը, մեկնելով ԱՄՆ, Եվրոպական երկրներ ու Չայաստան, որի հետեւանքով, Իրաքում ընդհանուր առմամբ, մնացել է շուրջ 10 հազար հայ: Այս մասին այսօր՝ նոյեմբերի 30-ին, մամուլի ասուլիսում հայտարարել է Facebook սոցիալական ցանցում իրաքահայերի խմբի ադմինիստրատոր Արա Աշյանը, հավելելով, որ նրանց մոտ կեսն ապրում է Բաղդադում: Մերձավոր Արեւելքում զարգացումները կարող են համզեցնել հայերի հետագա արտագաղթին դեպի Չայաստան: Չարց է ծագում. Իսկ կարո՞ղ է այս երկիրն ընդունել իր հայրենակիցներին,-նշել է նա: Աշյանի խոսքով, նախքան իրաքյան պատերազմը Բաղդադում հայերի թիվը գրեթե այնքան էր, որքան այսօր Իրաքի ողջ տարածքում հայերի թիվն է: Իրավիճակը ցանկացած պահի կարող է վերահսկողությունից դուրս գալ, քանի որ այնտեղ պարբերաբար ահաբեկչություններ են տեղի ունենում, որոնք կարող են ուղղվել քրիստոնյաների, մասնավորապես, հայերի դեմե,-կարծիք է հայտնել Աշյանը:

Գնահատելով Իրաքում հայ համայնքի ներկա դրությունը, նա նշել է, որ հայերը գտնվում են քիչ թե շատ կայուն վիճակում: Չայերենի ուսուցումը պաշտպանված է սահմանադրությամբ, բայց երիտասարդ հայերի շրջանում հայերենի իմացության աստիճանն իջնում է: Իրաքահայերն ունեն տարբեր մշակութային, բարեգործական եւ կրթականկազմակերպություններ: Բաղդադում կա 4 հայկական եկեղեցիներ,-ասել է նա:

Կիպրոսի թուրքական հատվածում գտնվող Մակարավանքը կործանվում է

Եթե նայեք այսպես կոչված «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն» քարտեզը, դուք ոչ մի նշան չեք գտնի, որ այդտեղ Սուրբ Մագար վանական համալիրի գոյություն ունի:

Վանական համալիրն անտեսվում է թուրքական իշխանությունների կողմից: 1000 տարեկան ուխտավայրը հնարավոր է շուտով չլիմանա բնության վնասակար

ներգործությանը, թուրք բարբարոսներին և վերանա: Վանական համալիրը տեղակայված է Պլատանիոթիսսա անտառի խորքում: Այն կառուցվել է ղպտի քրիստոնյաների կողմից Վլեթսանդրիայի սուրբ Մակարիոս ճգնաժողովի հիշատակին 1000-ական թվականներին: Նախքան 1425 թվականը այն փոխանցվել է Հայկական եկեղեցու հովանավորչության տակ՝ դառնալով ուխտատեղի և ստացել «Կապույտ վանք» անվանումը՝ փայտե տանիքի գույնից: Այստեղ են պահվել նաև մեծ թվով արժեքավոր ձեռագրեր՝ թվագրված 1202-1740 թվականները: Դրանցից մի քանիսը հետագայում տեղափոխվել են Կիլիկիայի կաթողիկոսարան: Վանքը որպես հոգևոր կենտրոն գործել է մինչ 1800 թվականը, որից հետո օգտագործվել է որպես դպրոց, ապաստարան և այլն: Այժմ վանքի վիճակը աղետալի է: Վանքը կորցրել է իր դեմքը: Այն վերածվել է ավերակի: Փոխանակ վերանորոգելու՝ տեղաբնակներն այն փորձել են որպես հյուրանոց օգտագործել 1998, 1999 և 2006 թվականներին, սակայն ամեն անգամ կանգնեցվել են Կիպրոսի Հանրապետության, Հայաստանի և Կաթողիկոսարանի, Վատիկանի կողմից: Բացի հիմնական եկեղեցուց, միայն երկու հայատառ գրված պաստառներն են հուշում, որ ճիշտ տեղում են հայտնվել: Դրանցից մեկը անեղծ է մնացել, քանի որ բավականին վերևում է գտնվում և բարբարոսների ավերածություններից չի տուժել: Այն թվագրվում է 1933 թվական: Ինչպես նշել է հայ համայնքի առաջնորդ Վարդգես Մահտեսյանը, «մենք գումար չունենք այն վերակառուցելու համար: Գրեթե ոչինչ չի մնացել վանքից, և հիմա խնդիրն այն է, որ պահպանենք այն ամենը ինչ կա»: 2007 թվականին Մահտեսյանը սկսել է կազմակերպել ուղևորություն դեպի պատմական վանքը մայիս ամսվա ամեն առաջին շաբաթ օրը:

Մակարավանքը՝ մինչ թրթրական օկուպացումը



Մակարավանքը՝ ներկայումս



Միջազգային

Պատերազմի դեպքում Ադրբեջանի խողովակաշարերը շատ մոտ կլինեն...

The Economist



The Economist հայտնի հանդեսն անդրադարձել է Արցախի հարցին իր «Հակամարտությունը սառույցի վրա» հոդվածով: Հոդվածում ներկայացվում է հակամարտության պատմությունը՝ փոքր-ինչ կանգ առնելով Շուշիի վրա: Լիբանանից Շուշի տեղափոխված Մայք Ադաջյանը պատրաստվում է հյուրանոցներ կառուցել հայկական քաղաքում: «Եկել եմ, որպեսզի տեսնեմ հողը, որի համար արյուն ենք թափել»,-հավելում է Շուշի տեղափոխված լիբանանահայը: Հոդվածում պատմական ակնարկից հետո The Economist-ը գալիս է այն համոզման, որ Ստեփանակերտում (իմիջիայոց, գրված է Ստեփանակերտ, և ոչ «Խանթենդի») ադրբեջանական տարբերակը) բոլորը հանգիստ են, քանի որ Հայաստանը Ռուսաստանի հետ դաշնակից է, իսկ Ադրբեջանի եկամուտի հիմնական աղբյուրը հանդիսացող նավթը արտահանող խողովակները Արցախին շատ մոտ են անցնում իսկ պատերազմի դեպքում դրանք շարքից հանելու համարատ ջանքեր պետք չեն լինի: HayNews.am

ԱՍՈՐԻՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՈՍՄԱՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՆ ՊԱՇԱՆՋՈՒՄ ԹՈՒՐԵԽԱՅՈՒՄ

Պահանջատերը Շվեդիայում կառավարող կոալիցիայի անդամ, Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության պատգամավոր Ռոբերտ Հալեֆն է: Նա նշել է, որ ներկայումս Շվեդիայում մոտ 100 հազար ասորի է բնակվում, ապա Շվեդիայի խորհրդարանից պահանջել է դիմել Եվրոմիություն, որպեսզի համոզես գա թուրքիայում ասորիներին ազգային փոքրամասնության կարգավիճակի տրամադրման նախաձեռնությամբ:

Պատգամավոր Հալեֆը, ինչպես նոյեմբերի 17-ին վկայել էր ANF գործակալությունը, Շվեդիայի խորհրդարանի ներկայացրած դիմումում նշել է, որ 1900-ական թթ. սկզբներին Օսմանյան թուրքիայում ավելի քան 2 միլիոն ասորի, հայ եւ հույն էր բնակվում, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ասորիների մեծամասնությունը սպանվել կամ վտարվել է հայրենի երկրից, ներկայումս թուրքիայում մնացել են ընդամենը 15 հազար ասորիներ:

Այնուհետև նա շարունակել է. «Այսօր թուրքիայում քրիստոնյաներն ու ասորիները զրկված են մայրենի լեզուն եւ ազգային մշակույթը պահպանելու հնարավորությունից: Դավանանքի պատճառով նրանք ճնշումների թիրախ են դառնում: Թուրքական պետությունը շարունակում է առգրավել նրանց կալվածքը: Դրա վառ ապացույցը մեր հոգեւոր կենտրոն Մար Գաբրիել տաճարն է, որը գտնվում է Մարդինի Միդիաթ գավառում: Ազգային փոքրամասնության այն կարգավիճակը, ինչ թուրքիայում ունեն հայերը, հույները եւ իրեաները, պետք է ունենա նաեւ ասորիները: Շվեդիան այդ հարցով թող նախաձեռնություն ցուցաբերի ԵՄ-ում»:

ԴԵՐՍԻՍՑԻՆԵՐԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Ներկայումս թուրքական վերանվանված Դերսիմը մեծապես բնակեցված է զազաներով, այնտեղ մասամբ բնակվում են նաև քրդեր: 1915-ի ցեղասպանության տարիներին եթե Դերսիմում հայերին փրկել են, ապա փրկողներն անխտիր եղել են այլապի զազաները, այլ ոչ թե դրախտ ընկնելու համար գոնե 3 հայի սպանությունը սրբազան պարտք համարող սուննի քրդերը:

1937-38 թթ. դեռևս Քեմալ Աթաթուրքի օրոք Օսմանյան կայսրության իրավաժառանգորդ Թուրքիայի Հանրապետությունն ապստամբությունը ճնշելու պատրվակով կոտորած սարքեց նաև Դերսիմում, սպանելով մինչև 90 հազար մարդ: Ստացածին ապստամբության ղեկավարները՝ Սեյիդ Ռիզան իր վեց զինակիցներով դեռևս 1937-ին դավադրաբար ձերբակալվել, ապա ել նույն թվի նոյեմբերի 15-ին կախաղան էր բարձրացվել:

Այս տարեկիցի առթիվ Ստամբուլում Դերսիմցիների միությունը համանման այլ միությունների եւ «Դերսիմ» թերթի աջակցությամբ կազմակերպել է միջոցառում, որտեղ համատեղ հաղորդագրությունը հրապարակել է նշված միության նախագահ Մեսութ Գերչեքը: Նա Դերսիմի կոտորածի համար ներողություն է պահանջել թուրքական պետությունից, ապա ել ասել է. «74 տարի առաջ Եյազիզի հրապարակում մահապատժի ենթարկեցին Սեյիդ Ռիզան եւ նրա ընկերները: Այս մահապատժը Դերսիմի կոտորածների համար յուրատեսակ պատրաստություն էր: Մահապատժից հետո շրջանում ռազմական գործողությունները ծավալվեցին: Վայրագաբար կոտորեցին անգեն բնակչությանը, կանանց, երեխաներին: Խաղաղ բնակիչների դեմ օգտագործվել էր քիմիական զենք եւ թունավոր գազ: Տասնյակիազարավոր մարդիկ կոտորածի զոհը դարձան: Հրի ու սրի մատնվեցին գյուղերը: Ծնողներից խլված մանուկներով եւ տեղահանվածների քարավաններով Դերսիմը պատմության մեջ ականատեսը եղավ ամենասոսկալի բռնության»:

Դերսիմցիների միության նախագահը միաժամանակ ասել է, որ կոտորածի համար պատասխանատու է այդ օրերին իշխող վարչակարգը, անխտիր բոլոր ներկայացուցիչներով, ապա ել ընդգծել է. «Դրա քաղաքական պատասխանատուն առ այսօր կոտորածներն արդարացնող ժողովրդահանրապետական կուսակցությունն է: Հանցակից են նաև թուրքական պետական ավանդույթը շարունակող մյուս բոլոր կուսակցությունները, որոնք վերջին 74 տարիներին իշխանության են եկել: Այդ թվում վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը, քանի որ համառոտեմ պաշտպանում է ժխտողականությունն ու բնաջնջման քաղաքականությունը»:

Ի դեպ, Դերսիմի կոտորածի օրերին Թուրքիայում գործում էր միակուսակցական համակարգ, երկրում միանձնյա իշխում էր երիտթուրքերի Իթթիհատ վե Թերաքքի կուսակցության իրավահաջորդ ժողովրդահանրապետական կուսակցությունը, որն ստեղծել է Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքը:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

ՀՀ-ում Իրանի դեսպան. Իրանը միշտ կմնա եղբայրական Հայաստանի և հայ ժողովրդի կողքին

Իրանի ժողովուրդն ու կառավարությունը միշտ կմնան եղբայրական և բարեկամական երկիր Հայաստանի և հայ ժողովրդի կողքին: Այդ մասին իրանական «ՖԱԼՍ» լրատվական գործակալության հաղորդմամբ՝ Երևանի Կրթության միջազգային ակադեմիայում տեղի ունեցած միջոցառման ժամանակ հայտարարել է ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Սեյեդ Ալի Սադայիանը: Համաձայն տեղեկատվության՝ Կրթության միջազգային ակադեմիայում տեղի ունեցած միջոցառման ժամանակ ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի հարցերով խորհրդական Սոհամադ Ռեզա Շաքիբային շնորհիվ է Լազարյանի միջազգային հարաբերությունների ինստիտուտի պատվավոր դոկտորի աստիճան: Իրանական «ԻՌԱՍ» լրատվական գործակալությունն էլ հաղորդում է, որ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի հարցերով խորհրդական Սոհամադ Ռեզա Շաքիբայի պաշտոնավարման ավարտի կապակցությամբ, վերջինիս պարգևատրել է մշակույթի նախարարության բարձրագույն պարգևով:

Շասարակական

Սոցիալիստական, իրավահավասարության ու

առանց շահագործումների հասարակարգի

իդեալները համամարդկային են

Posted by norkhosq.net on November 29th, 2011



Նոյեմբերի 29-ը Սովետական Հայաստանի տարեդարձի օրն է: 1920 թ- Նոյեմբերին Հայ ժողովրդի ամենահեռապետ, քաղաքականապես գիտակ ու զարգացած հատվածը՝ հայ բոլշևիկ համայնավարները, կատարեցին պատմական ու ժամանակի համար ամենաճշգրիտ որոշումը: Հայաստանը հռչակելով սոցիալիստական հանրապետություն, չեղյալ հայտարարելով Ալեքսանդրապոլի ստրկացուցիչ պայմանագիրը, նրանք Հայաստանի ու հայ ժողովրդի փրկությունը տեսան Ռուսաստանի մեծ հեղափոխության հաղթանակի ու Ռուսաստանի հետ քաղաքական դաշինք կնքելու մեջ:

Ստեփան Շահումյանը, Մարգիս Կասյանը, Սուրեն Սպանդարյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Եղիշե Չարենցը, Աղասի Խանջյանը, Վահան Տերյանը, ազգային հերոս գեներալ Մնդրանիկը ու հարյուրավոր այլ հայրենասեր ու լուսավոր մտքի տեր մարդիկ, կանգնեցին Հայաստանի նոր ու փրկարար ուղու ակունքներին: Չլինեք հայ բոլշևիկ (մեծամասնական) համայնավարների այս պատմական մեծ սխալագործությունը, հազիվ թե հայ ժողովուրդը փրկվեր զազան թուրքի երախից:

Խորհրդային ժամանակաշրջանը դարձավ հայ ժողովրդի զարգացման ու առաջադիմության նոր դարաշրջան... Այն, ինչ կատարված է Սովետական Հայաստանի հանրապետությունում, այսօր աշխարհի ու հայության աչքի առջև է: Նրանք, ովքեր միտոմնավոր նսեմացնում են հայ ժողովրդի խորհրդային ժամանակաշրջանի ձեռքբերումները, խեղաթուրում պատմությունը, անշուշտ, մեր ժողովրդի

բարեկամները չեն: Անկախության 20 տարին Սովետական Հայաստանի անցած ուղու համարյա մեկ երրորդ ժամանակահատվածն է, նոր հասարակարգի դրամատիքական ու ազատ շուկայի ջատագովները թող ցույց տան իրենց ձեռքբերումները:

Արփա- Սևան 48 կիլոմետր երկարությամբ լեռնային ջրանցք կառուցող ժողովուրդը, այսօր մակարոնը Իրանից ու Թուրքիայից է ներմուծում:

Ցավոք, միջազգային իմպերիալիզմին, արտաքին ու ներքին հակահեղափոխական ուժերին հաջողվեց կասեցնել մեր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հանրապետության զարգացման ուղին...

Սոցիալիստական, իրավահավասարության ու առանց շահագործումների հասարակարգի իդեալները համամարդկային են և ունեն դինամիկ զարգացում: Այս զարգացման ընթացքը կասեցնել հնարավոր չէ, հակառակ դեպքում մարդկությունը կդադարի նոր հանգրվաններ նվաճելու իր զարգացման բնական ընթացքից...

Շնորհավորում ենք Լոյսների 29 - ը, Խորհրդային Հայաստանի տարեդարձը, ցանկանալով ուժ ու կողով հայրենիքի աշխատավոր ժողովրդին՝ իրենց իրավունքներին վերատիրանալու գործում:

Դոկտ. Զ. Բարսեղյան
«Լոյս խոսք»

ՎԱՂԱՐՉԱՄԱՏԵՆ՝ ՎԱՂԱՐՉԱՊՈՍ

ՀԱՅՐ ՊՄՈՒՆՏ Ծ.Վ. ԵՐԵՑԵԱՆ

Հետաքրքրութեամբ կարդացի «Ապարեզ» օրաթերթի ուրբաթ 14 հոկտեմբեր 2011 (յատուկ բաժին՝ նուիրուած Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին), որուն մէջ Միւռնն Ծ.Վ. Ազնիկեան կը գրէ եւ կը բացատրէ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Վաղարշապատէն Անթիլիաս» պատմական երթը եւ իրագործումները:

Որքան էլ մեր սրտին մօտիկ հաստատութեան իրագործումներուն մասին ու կը ջատագովէ հայր սուրբը, սակայն դրդապատճառը, վստահաբար, Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսին՝ Նորին Ս. Օծուքին Արամ Ա.Ի այցելութիւնն էր Կալիֆորնիա, եւ իբր յարմար պարագայ մը իր պատմածներու կողքին՝ ան կը յայտնէ «իր գաղափարները», որոնք ես կը խորհիմ չեն համապատասխաներ պատմական իրականութեանց, նաեւ չեն համապատասխաներ Հայց. եկեղեցւոյ միութեան ոգիին եւ ընդհանուրին օգտին: Յօդուածը ձգտում մը եւ ճիգ մըն է բան մը հասկնցնելու՝ «խաղին մասնակցելու», եւ մենք՝ իրեն այդ առիթը պիտի տանք:

Իմ մատնանշելի կէտերը հետեւեալներն են. հայր սուրբը իր խօսքը յառաջ մղելու պատրուակով կը գրէ այս ամբողջ յօդուածը ըսելու համար, թէ «1441 թուականէն սկսեալ, Հայց. եկեղեցին ունեցաւ զոյգ կաթողիկոսներ, համահաւասար իրաւասութիւններով եւ թեմական անկախ կազմակերպութիւններով»: Եւ քիչ մըն ալ յառաջ երթալով կը փորձէ նաեւ այն տպաւորութիւնը թողուլ, թէ Անթիլիասի աթոռը շարունակութիւնն է Վաղարշապատի աթոռին: Յօդուածին վերնագիրը՝ «Վաղարշապատէն Անթիլիաս», այդ կը թելադրէ: Մեր յարգելի յօդուածագիր հայր սուրբը կը շարունակէ ըսելով, թէ «Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը պատմական բաւական հարուստ փորձառութիւն ունի միջեկեղեցական բնագաւառէն ներս, ընդհանրապէս Դ, Ե, Միջին դարերուն ու մասնաւորաբար կիլիկիեան ժամանակաշրջանի ԺԲ դարուն»: Արդեօ՞ք ըսել կ'ուզէ, որ Կիլիկեան աթոռը գոյութիւն ունէր Դ եւ Ե դարերուն: Այս ինչ անհեթեթ տրամաբանութիւնն է արտասովոր գիտ:

Անդրադառնալով արտասահմանի թեմերուն, յօդուածագիրը կը շարունակէ ըսել. «Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 1957-58 տարիներուն ընդառաջելով սփիւռքահայ զանազան զաղութներու՝ Իրանի, Յունաստանի եւ Միացեալ Նահանգներու խնդրագիրներուն, իր հովանիին եւ հոգեւոր հոգածութեան ներքեւ կ'առնէ զանոնք, անոնք

երկար տարիների անհովիւ եւ հոգեւորապէս անմխիթար լքուած էին»: Ճիշդ է, դէպքեր եւ անիմաստ դրդումներ պատահած են երկուստեք եւ Դուք պատճառը շատ լաւ գիտէք: Ինչ որ եղած են՝ մասնակի եւ կամ տեղական հանգամանք ունեցած են: Եւ այդ երբեք չէ եղած մեր թեմի առաջնորդներուն եւ նուիրապետական կարգերու ընթացքը եւ գործունէութիւնը: Ուստի, չեն բաժներ յօդուածագիրին պատմական փաստերու սխալ հասկացողութիւնն ու մեկնութիւնը:

Կիլիկեան աթոռին կանոնականութիւնը պաշտպանելու համար գարտուղի միջոցառումներու հարկը չեն տեսներ: Հայ Անթիլիասը այսօր իրականութիւն մըն է մեր ազգային-եկեղեցական կեանքին մէջ: Բիւր յարգանք երանաշնորհ հանգուցեալ հայրապետացն Սահակ Խապայեան կաթողիկոսի, աթոռակից Բարբէն կաթողիկոսի, Սարածեան Պետրոսի, Գարեգին Յովսէփեանցի եւ այլոց, որոնք «ազնուական արթնամտութիւնը ունեցան անխախտ պահելու համերաշխութեան եւ սիրոյ սկզբունքը, որ մեր ազգային-վարչական կեանքի խարիսխն ու կանոնն է եղած միշտ եւ պէտք է լինի յաւեւ»: Ուստի պէտք է խուսափիլ շփոթեցուցիչ եւ անպատասխանատու արտայայտութիւններէ, որոնք միայն կը շահարկուին ի վնաս ընդհանուրի օգուտին եւ կը մնան անմարտելի:

Բայց յանկարծ կ'անդրադառնամ «Ահ, այս զանգակն ալ ի՞նչ է, որ այս ժամուն կը հնչէ»:

Անցնինք մեր միւթին:

1441 թուականին Կիլիկիոյ Գրիգոր Թ. Մուսաբեկեանց կաթողիկոս թէւ մերժեց արեւելեան վարդապետներու հրաւերը, որ ինք անձամբ երթայ Էջմիածին եւ հոն իր պատմական տեղւոյն վրայ հաստատուի: Այսուհանդերձ արտօնեց որ Էջմիածնի մէջ ազգային-եկեղեցական ժողով գումարուի, եւ իր հաւանութեամբ՝ ընտրել նոր կաթողիկոս եւ Աթոռը փոխադրել Սիսէն Էջմիածին (Մեծուփեցի, Օրմանեան, Կիւլեւերեան): «Եւ եթէն գտեր Կիրակոս Վիրապեցին կաթողիկոս Էջմիածնի, եւ այս եղեւ յամի տեառն 1441 եւ հայոց ՊՂ թուին» (Մաղաքիա դպիր):

Ահաւասիկ հոս է բուն հարցին տութիւնը:

Ինչ որ ալ ըլլան պատճառները Մուսաբեկեանցի Կիլիկիա մնալուն եւ կամ այլուր (շատեր նոյնիսկ կը խորհին, որ Եգիպտոս գացած եւ հոն վախճանած է), ինչ որ ալ ըլլան արեւելեան վարդապետներու յետագային յարուցած խնդիրները, բոլորն ալ երբեք չեն կորսնցներ իրաւական արդարացումը Աթոռին փոխադրութեան: Բոլորս ալ գիտենք, տեղափոխութիւնները միշտ կատարուած են պատմական ստիպողութեանց ներքեւ:

Կիլիկիա եւ միւս բոլոր վայրերը, Դուինէն մինչեւ Սիս, ուր ժամանակ առ ժամանակ ամենայն հայոց հայրապետներ հաստատուեցան ինչ-ինչ պատճառներով մինչեւ 1441 թուականը, բոլորն ալ եղած են ամենայն հայոց կաթողիկոսութեան նստոցներ: Ուստի կը մնան իրաւականօրէն, ճշմարտապէս եւ կանոնագիտական իմաստով ամենայն հայոց հայրապետներ, անկախ իրենց տեղագրական եւ աշխարհագրական վիճակներէն: «Ստոյգ է հետեւաբար, որ Ս. Էջմիածնի աթոռն է որ փոխադրուած էր նոյն վայրերը, ու այդ իսկ պատճառաւ, արեւմուտք հաստատուած կաթողիկոսները յաճախ կը ստորագրէին «Կաթողիկոս Ս. Էջմիածնի պանդխտեալ ի Սիս» («Սիոն»): Որքան ալ ընդհանուր պատկերը մխիթարական չըլլար, Լուսաւորչի աթոռին փոխանցումը Սիսէն Էջմիածին, բառին կանոնագիտական առումով, կը կազմէ օրինաւոր շարունակութեան շղթան, Մուսաբեկեանց, Վիրապեցի եւ յաջորդներ մինչեւ այսօր: Որովհետեւ ամենայն հայոց հայրապետական աթոռին վերադարձն էր ի Ս. Էջմիածին, ազգային-եկեղեցական ժողովի որոշմամբ եւ Մուսաբեկեանց կաթողիկոսի արտօնութեամբ եւ հաւանութեամբ: Անոնք որոնք կը խորհին, թէ Կիլիկիոյ աթոռը ուղղակի Լուսաւորչի կաթողիկոսական գիծին շարունակութիւնն է կամ

Շնորհալիի, այդպիսիներ հեռու են պատմութեան իրականութենէն, եւ զուրկ «ի դպրութենէն կենաց»:

Եթէ այսօր ազգային-եկեղեցական ժողովը հասկնալի իրադարձութեանց հետեւանքով եւ աթոռին ապահովութիւնը մի մտի ունենալով, փորձէ փոխադրել Մայր աթոռը այն տեղը կամ միջավայրը, ուր ինք կը նկատեան ամենապատշաճ Մայր աթոռի շարունակութեան եւ կամ գոյատեւման, իր կանոնական իրաւունքին մէջն է: Որովհետեւ՝ եկեղեցւոյ բարձրագոյն հեղինակութիւնն է, ինչպէս որ էր պարագան 1441ին Էջմիածին գումարուած ազգային-եկեղեցական ժողովը:

Հայց. առաքելական եկեղեցւոյ մէջ կանոնագիտական հասկացողութիւնը այն է, որ կաթողիկոսը գերիվեր չէ ազգային-եկեղեցական ընդհանուր ժողովէն: Ազգային-եկեղեցական ժողովն է որ կը նստի կաթողիկոսը եւ ի հարկին կրնայ անոր հրաժարականը պահանջել:

Գրիգոր Թ. Մուսաբեկեանց կաթողիկոսը անփորձ եւ անտեղեակ անձ մը չէր անցուդարձերուն: «Ինք լավ գիտեր, թէ այլեւս Կիլիկիան կորսնցուցած էր իր քաղաքական իշխանութիւնը, եւ ինքնին կորսուած էր կաթողիկոսներուն Էջմիածինէն հեռու մնալը արդարացնող կռուանը» (Բ. Կ., Պտմ. Կաթողիկոսաց Կիլիկիոյ): Մուսաբեկեանց կաթողիկոս գիտնալով արտօնեց ազգային-եկեղեցական ժողովի գումարուելը, եւ հաւանութիւնը յայտնեց նոր կաթողիկոսի ընտրութեան: Վիրապեցին իր ընտրութենէն յետոյ իր օրինութիւնները կը դրէ Մուսաբեկեանցին եւ ապա կը կատարէ միւռոնի օրինութիւն: Մուսաբեկեանց de facto կը դառնայ հրաժարեալ, եւ կը մնայ որպէս պատուակալ կաթողիկոս Սիսի՝ կենթադրեմ, ուր տակաւին գոյութիւն ունէր բազմահազար հայ ժողովուրդ: Ազգային-եկեղեցական ժողովը իր իրաւասութեամբ կը վերահաստատէ Վաղարշապատի աթոռը մօտաւորապէս ինը դար աստանդական թափառումէ ետք:

Ի՞նչ հասկացողութեամբ եւ օրէնքի ի՞նչ տրամաբանութեամբ Միւռոն ծ.վ. կը գրէ, թէ զոյգ կաթողիկոսներ համահաւասար իրաւունքներ կունենան: Հայ եկեղեցւոյ ո՞ր կանոնադրական կողմէն մէջ գոյութիւն ունի համահաւասար կաթողիկոսներ կամ կաթողիկոսութիւն: Առածը կըլսէ. «Խղճի եւ պատուոյ տէր անձերուն համար չէ որ յօրինուած է օրէնքը»: Հետեւաբար «Տարակոյս չկայ որ այդպիսի մարդիկ ստոյգ պատմութենէ անտեղեակ, երեւոյթներով ոգեւորուող, պաշտպանելու կելլեն պատմական սխալ բացատրութիւններով»: Երկու համահաւասար կաթողիկոսներ գոյութիւն չեն կրնար ունենալ: Ծիծաղելի է, որովհետեւ երկու համահաւասար հայ ժողովուրդ գոյութիւն չի կրնար ունենալ, որ աւելի ծիծաղելի է: Այդ իրաւունքը անմիջապէս իրենց անձերուն շնորհած վերջաբոյս կամ նորաբոյս տիտղոս մըն է, ինքնաստեղծ, օտար եւ անընդունելի, ազգային-եկեղեցական շնորհաբաշխութեանց պարզեւնէրու ցանկէն: Մէկ է եկեղեցին, մէկ է հայ ժողովուրդը եւ մէկ է ամենայն հայոց կաթողիկոսութիւնը:

Այս յօդուածը գինն է վրիպած ճիգի մը: Սահակ կաթողիկոս խապայեան իր առաջին կոնդակին մէջ այսպէս կը գրէ. «Կաղաչեմ զձեզ, վարդապետք եկեղեցւոյ, որ ի ձեռնարկութենէ ընկալեալ շնորհօք Ս. Հոգւոյն ուսուցիչք էք բանին ճշմարտութեան»:

Ճիշդ չէ նսեմացնել ամենայն հայոց հայրապետներու իրաւասութիւնը: «Ամենայն հայոց հայրապետութեան ոյժը, ամէն բանէ աւելի հոգեկան ոյժի գերագոյն կառոյցն է, ան Լուսաւորչի ոյժն է»:

Ինչ կը վերաբերի Կիլիկիոյ աթոռին աստանդական վիճակին, Կիլիկիոյ պարպումէն ետք Տեղասպանութենէն ազատած եկեղեցականներ եւ հայ ժողովուրդը Սահակ խապայեան կաթողիկոսի գլխաւորութեամբ կու գան հաստատուելու Երուսաղէմ, ապա Հալէպ եւ հուսկ Պէյրութ:

Վիճակը ողբալի էր եւ ցաւալի: Գաղատագիրը անգութ եղաւ մեր ժողովուրդին:

Ճգնաժամային այդ պահուն փրկութեան եւ օգնութեան իրենց անվերապահ աջակցութիւնն ու օժանդակութիւնը կը ընձեռեն Ամենայն հայոց հայրապետ Գեորգ Ե., Էջմիածին, եւ Երուսաղէմի Ամեն. պատրիարք Եղիշէ արք. Դուրեան, գաղափարակից ունենալով թորգոմ արք. Գուշակեանը, ապագային պատրիարք Երուսաղէմի, Բաբկէն արք. Կիլիկեանը, յետագային աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ: Այո, Կիլիկիոյ աթոռը պանդուխտ էր եւ զայն պէտք էր փրկել:

Այս մեծամունց եկեղեցականները իրենց մտքերէն երբեւիցէ չանցուցին «վերջին հարուածը տալ» Կիլիկիոյ պատմականացած աթոռին, այլ ջանացին հոգեւորագէտու զանոնք ի գին ամէն զոհողութեանց: Նոյնիսկ, հայրապետական հրամանով եւ տնօրինութեամբ՝ Պէյրութի եւ Դամասկոսի թեմերը յանձնելով Սահակ կաթողիկոսին: Արդեօք այս չէ՞ իմաստը միութեան ոգիին եւ եղբայրակցութեան, թէկուզ որ Մայր աթոռը կը գտնուէր համայնավար երկրի մէջ, բայց այդ երբեք արգելք չկրցաւ դառնալ նոր հրամայականին առջեւ, փրկել մեր ժողովուրդը, փրկել Կիլիկեան աթոռը: Ինչ համբուրելի խղճմտանք: Այս է իրական ազգային միութեան ոգին, այս է եկեղեցւոյ հասկացողութիւնը եւ այս է Քրիստոսի եկեղեցին:

Ճիշդ այդ ոգին մղուած եւ չեն հասկնար եւ չեն ընդունիր Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ թեմերու գրաւումը, ինչ որ ալ ըլլան պատճառները:

Այս բոլորը կըսենք, կրկնելով եւ շեշտելով, թէ եկեղեցական, իրաւական, կանոնագիտական տեսակետը այն է, թէ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, որ մաս կը կազմէ Հայց. եկեղեցւոյ, պարզապէս կը մնայ մասնակի աթոռ մը, ենթակայ ամենայն հայոց կաթողիկոսութեան ի հոգեւորս, անկախ ըլլալով վարչական եւ մատակարարական գործունէութեանց մէջ:

Ի՞նչ սխալ բան կայ ասոր մէջ: Ենթակայութիւն: Ըստ իս՝ ոչ: Համերաշխութիւն եւ կարգապահութիւն միայն: Այս է հասկացողութիւնը եկեղեցւոյ ամբողջականութեան, միութեան եւ անոր նուիրապետական կարգին եւ օրէնքին:

Մեծի տանն Կիլիկիոյ աթոռը դրժեց համերաշխութեան ոգին եւ ժամանակը ցոյց տուաւ, որ նուիրապետական աթոռները պարզապէս օգտագործուեցան: Թեմերը գրաւուեցան այն առարկութեամբ, թէ անոնք «ամմխիթար» վիճակի մէջ կը գտնուէին: Յստակ էր, որ յայտնի եւ մութ ձեռքեր՝ այդ գործին ետեւն էին: Պետք է յաջողցնէին Կիլիկիոյ աթոռը իրենց հակակշռին տակ առնել եւ կուսակցականացնել եւ հակադրել ամենայն հայոց հայրապետութեան: Այդպէս ալ եղաւ ցայսօր բանիւ եւ գործով: Թորգոմ Գուշակեան պատրիարք այս ձեւով պիտի արտայայտուէր. «Ինձ թոյլ կու տան ըսելու, թէ ձեր խղճմտանքը նոյն ինքն պէտք է գլխովին ըմբոստանայ այդպիսի մտածումի մը դէմ»:

1916 ամսիս Երուսաղէմ: Սահակ կաթողիկոս իր պանդխտացեալ եւ արտոքալ էր եւ կը մնար հայոց վանքին մէջ: Գնալ փաշա այցելութեամբ կը գտնուէր Երուսաղէմ, եւ իր գրասենեակին մէջ, ուր հրաւիրուած էր Սահակ կաթողիկոս, խօսքը ուղղելով իրեն կըսէր. «Մենք չենք ուզեր, որ մեր թշնամիին հպատակ եղող կաթողիկոս մը մեր տէրութեան սահմաններուն մէջ ապրող հայերուն հոգեւոր պետը ըլլայ...» եւն: Սահակ կաթողիկոս կը վերադառնայ հայոց վանք ընկնուած եւ ցնցուած: Եւ կըսէ իր միաբաններուն. «Նոյնիսկ Շահ Աբբաս այս տեսակ ճիւղային գաղափար մը չյղացաւ, հայ ժողովուրդը անջատել էջմիածինէն: Թուրքերը տակաւին չեն կրցած հասկնալ հայ ժողովուրդին մտայնութիւնը: Հայ ժողովուրդին հանդէպ Էջմիածնի ունեցած պաշտումը»:

Պարսկաստանի եւ Յունաստանի թեմերը չունէին այն «ամմխիթար» իրավիճակը, որ իբր թէ կը տիրէր Սիւրբալ

Նահանգներու մէջ: Ինչո՞ւ անոնք ալ բաժնուեցան Էջմիածինէն: Իրանի եւ կամ Նոր Զուղայի պատմական թեմերը չորս հարիւր եւ աւելի տարիներ հաւատարմութեամբ միացած եւ մնացած էին ամենայն հայոց հայրապետութեան իրաւասութեան ներքեւ եւ կարեւոր մէկ մասը կը կազմէին ամենայն հայոց հայրապետութեան թեմական կառոյցին: Ինչպէ՞ս յանկարծակի 1958ին թեմերը կ'անցնին Անթիլիասի հովանաւորութեան, նոյնը Յունաստանի պարագային: Պատճառը արտասահմանի եկեղեցիները Անթիլիասի աթոռի գլխաւորութեամբ հակադրել Էջմիածինն եւ անոր միջոցաւ մայր հայրենիքին: Այն իրաւունքները եւ յարաբերութեանց սահմանները, որոնք ճշդուած էին 1652ին Երուսաղէմի ժողովին մէջ Ներսէս Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի եւ Փիլիպոս ամենայն հայոց կաթողիկոսի ներկայութեան, բոլորն ալ ջուրը թափուեցան առանց խղճահարութեան:

Կուգեմ հոս պատմական փակագիծը մը բանալ: 1930ական թուականներուն յաճախակի այցելութիւններով Երուսաղէմ կու գայ Գահիրէէն Արշակ Զամալեան (ղաշնակցական կուսակցական գործիչ եւ նախկին նախարար Յայաստանի Հանրապետութեան) խորհրդակցելու եւ ռազմավարելու նպատակով, որ Երուսաղէմի մէջ հիմնուի հակաթոռ կաթողիկոսութիւն մը յաճմին Թորգոմ պատրիարք Գուշակեանի: Արթուն էին հայոց հայրապետները: Արթուն էին Երուսաղէմի եկեղեցականները: Տեսան վտանգը այդ առաջարկին, եւ մերժեցին զայն: Յարգանք իրենց, որովհետեւ չղուեցին իրենց կոչումին, բան մը որուն մէջ յետագային Անթիլիասի աթոռը թերացաւ եւ զոհ գնաց այդ անխոհեմ քաղաքականութեան:

Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մեծութիւնը եւ փառքը թեմեր գրաւելու մէջ չէ: Իր մեծութիւնը, հոգ չէ թէ տեղական կամ մասնակի կաթողիկոսութիւն ըլլայ, իր գործին ազնուականութեան եւ առաքելութեան մէջն է: Իր փառքը եւ մեծութիւնը եւ կարեւորութիւնը իր հաւատքին, յոյսին, սրտին, ստեղծագործ զօրութեան եւ հոգեւոր եւ մշակութային կենսունակութեան մէջ պէտք է ըլլայ: Այս է իր նուիրական պարտականութիւնը եւ ոչ թէ անիմաստ մրցակցութիւնը: Ի՞նչն է վնասը, եթէ թեմը եւ կամ թեմերը կը պատկանին ամենայն հայոց հայրապետութեան, ինչ որ է պատմականօրէն: Արդե՞ք ամենայն հայոց հայրապետութիւնը օտար եկեղեցի մըն է եւ կամ օտար դաւանանք, քաւ լիցի: Եթէ UNITY IN DIVERSITY այդ ըսել է, որպէս արդարացուցիչ տեսակետ, կը ցաւիմ այդ տկար տրամաբանութեան վրայ: Անթիլիասը լրացուցիչ մէկ մասն է ամենայն հայոց հայրապետութեան: Կը հաւատամ որ Մեծ տանն Կիլիկիոյ արժանաւոր եկեղեցականներ կրնան եւ պէտք է ծառայեն նաեւ ամենայն հայոց հայրապետութեան թեմերէն ներս: Այդ է մեր եկեղեցւոյ իսկական միութեան ոգին, պայմանաւ որ եկեղեցւոյ միասնականութիւնը եւ ամբողջականութիւնը եւ անոր նուիրապետութիւնը յարգուի օրէնքով եւ գործով:

Ի՞նչ հարկ եւ պատճառ կայ եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին երկու տարբեր ներկայացուցիչներով ներկայանալու: Չէ՞ որ մէկ է մեր եկեղեցին եւ անբաժան: Ամօթ չէ՞ մեզի: Ո՞ր է զիջողութեան ոգին: Ես երբեք հարց պիտի չունենամ, եթէ Արամ կաթողիկոս ինքը ներկայանար եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին որպէս գլխաւոր ներկայացուցիչը ամենայն հայոց հայրապետութեան: Արդեօք այդ ընելով նսենացո՞ւմն է Կիլիկիոյ աթոռի հեղինակութեան, եւ կամ իր անձին: Ընդհակառակը, այդ զօրութիւնն է մեր եկեղեցւոյ միասնականութեան:

Արամ կաթողիկոս իր Կալիֆորնիա այցելութեան ընթացքին յաճախ կ'արտայայտուէր, թէ հայ եկեղեցին մէկ է, հայ ժողովուրդը մէկ է եւ հայ եկեղեցին չէ բաժնուած: Սակայն «Բաւական չէ համոզուած ըլլալ ճշմարտութեան, այլ պէտք է տիրապետուիլ ճշմարտութենէն» (Եղիվարդ):

Կը յիշեմ հանգուցեալ Գարեգին Ա. Կաթողիկոսին խօսքը, որ մինչեւ հիմա ականջիս մէջն է, երբ հայրապետական այցելութեամբ կը գտնուէր Տիբորթ, Ամերիկա, ուր ես եկեղեցւոյ հովիւն էի եւ հիւրընկալը, «Ռիթթ Գարլթըն» պանդոկի իր սենեակին մէջ հանգուցեալ Մեսրոպ արք. Աշճեանին ուղղելով իր խօսքը, բարձրաձայն եւ բարկացկոտ կ'ըսէր. «Գնա՛, ըսէ՛ բարեկամներուդ, ինչո՞ւ չեն ուզեր միանալ, հիմա Հայաստանը անկախացած է, ժամանակին ես ալ կը պայքարէի այդ գաղափարին դէմ, այսօր ի՞նչ արդարացում կայ, խնդրեմ, գնա՛, ըսէ՛ քու բարեկամներուդ»:

Մենք կը սիրենք Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը: Իր մեծութիւնը եւ փառքը համահաւասար ըլլալու մէջը չէ: Իր մեծութիւնը եւ փառքը թեմերը գրաւելու մէջը չէ: Իր մեծութիւնը եւ փառքը Ս. Էջմիածինը զօրացնելու մէջն է: Էջմիածնի զօրացումը իր ալ զօրացումն է, անոր տկարացումը իր ալ տկարացումն է:

Հայ ժողովուրդը չ'ընդունիր որեւէ այլ կերպ: Եւ ձանձրացած է ներկայ կացութենէն: Մի կարծեք որ մեր ժողովուրդը զուրկ է զայրամալու զգացումէն: Զայրոյթը իր հոգիին մէջն է: Կրակը հոն է: Զգուշացէ՛ք անոր բոցավառումն:

ԱՄՆ

(Սույն հոդվածը նոյննքերի 5-ին հրատարակվել է Կալիֆորնիայում հրատարակվող «Մասիս» շաբաթաթերթում):

ՎԻՃԱՅԱՐՈՅՑ ՀԱՐՅԵՐ Ն. ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏՈՒԹԻՒՆԻՑ

Հրաչ Միրզախանեան



1923թ. Մայիսի 19-ին Վիեննայում գումարում է Հայաստանի՝ իշխանութիւնը կորցրած Հ.Յ. Դաշնակցութեան կուսակցական խորհրդաժողով, որի որոշումներից մէկը հետեւեալն է. "Ձեռք առնել գաղութահայութեան ազգային ղեկավարութիւնը, ամէ՛ն գնով եւ կարելի բոլոր միջոցներով:" ("Նոր Մերուսըը Քաւութեան նոխազ" Թորգոմ Վեհապետեան, 1986, Բէյրութ, Գ. հատոր, էջ 46) Խորհրդաժողովից յետոյ, գաղութներում ՀՅԴ-ի մարմինները լաւագոյնս իրագործեցին կուսակցութեան ընդունած որոշումը, "ամէն գնով եւ կարելի բոլոր միջոցներով" տիրեցին սփիւքահայութեան ազգային ղեկավար դիրքերին: Մասնաւորաբար Իրանում այն տեղի ունեցաւ իշխող վարչակարգի թոյլտւութեամբ ու լիակատար աջակցութեամբ: Արդիւնքում իրանահայ բոլոր ազգային հաստատութիւնները եւ հարստութիւնը անցան ՀՅԴ-ի գերիշխանութեան ներքոյ, որը եւ աւելի ամրապնդեց 1958 թիւն իրանահայ երեք թեմերի անօրինական միացումով Կիլիկիոյ կաթողիկոսութեանը: Դաշնակցականները գրաւեցին եւ թաքնեցին եկեղեցական կառոյցներում, արդիւնքում դաշնակցականացեց ոչ միայն եկեղեցու վարչական կառոյցը, այլեւ հոգեւորականների մի մասը, եկեղեցական արարողութիւններն ու տօնակատարութիւնները, ազգային բոլոր դպրոցներն ու հաստատութիւնները եւ այսպիսով 400 ամեայ գաղութի մեծաքանակ ազգային բոլոր հարստութիւնները, հնարաւորութիւնները եւ կալաճները

դարձան ՀՅԴ-ի սեփականությունը, որն էլ այն օգտագործեց եւ դեռեւս օգտագործում է ըստ իր հայեցողութեան ծառայեցնելով կուսակցութեան նպատակների իրագործմանը: Մի թռուցիկ ակնարկ նետելով իրանահայ հասարակական կեանքին, ակնյայտ է դառնում, որ գոյություն ունեցող բոլոր դաշնակցականամէտ միաւորները տեղակայած են ազգապատկան կալածներում եւ համարեա բոլորն էլ թաքուն եւ ակնյայտ նիւթա-բարոյապէս պաշտպանում եւ հովանաւորում են ազգային իշխանությունների կողմից: Խօսենք փաստերով.

-Թեհրանի Հեշմաթիէ թաղամասում ազգային բիւջով կառուցած "Հայ Տուն"-ը տրամադրւել է "Մարադարապատ" միութեանը:

-Արհեստաւորների միութեանն է յատկացւել "Արամ" սրահը: -Ջարքէշ թաղամասի "Նայիրի" սրահը տրամադրւել է "Միփան" միութեանը:

- "ՀՈՒՄԿ"-ը տեղակայած էր ազգապատկան "Գաբրիէլեան" շէնքում: ("Փոթորկոտ կեանքի օրերը" Լ.Ահարոնեան, էջ 496)

-Ազգային բիւջէից տարեկան 25,000,000 թուման վճարում են "Հուսկ"-ին "Պատգամ" պարբերականի 4 համարի հրատարակման համար:

-Նոր Ջուղայի "Մասուն" միութիւնը՝ ՀՅԴ-ի հայ դատի գրասենեակը, Սպահանի եւ Շահինշահի "Արարատ" միութիւնները տեղակայած են ազգապատկան տարածքներում:

-Նոր Ջուղայի գերեզմանատան շրջափակում գտնուող ազգապատկան ֆուտբոլի դաշտի վարձակալությունից ստացած եկամուտը (ամսական 12.000.000 թուման) տրամադրում էր "Արարատ" միութեանը: (Տեղեկագիր Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի (ԹԽ) 4 Փետրւար 2003 -4 Փետրւար 2004, էջ 8)

-Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական Ժողովը (ՊԺ) տարիներ ի վեր է, որ Թեմի համար նախատեսած բիւջեում յատուկ գումարներ է յատկացնում եւ վճարում ՀՅԴ-աշնակցութեան Հայ Դատի գրասենեակին, առանց նրանցից պահանջելու նիւթաբարոյական զեկոյց :

-2007.թ. այդ գրասենեակին է վճարւել 32,000,000 թուման (ԹԽ 2007թ.նախահաշիւ), իսկ նոյն հաստատութեան Եւրոպայի գրասենեակին 18,385 ԱՄՆ Դոլար (17,000,000 թուման): (ԹԽ 2007 թ. Արտակարգ նախահաշիւ)

-Իսկ 2011 թ.ակնի համար առայժմ նախատեսւել է վճարել 42.000.000 թուման: (ԹԽ նախահաշիւ 1 Յունւար առ 31 Դեկտեմբեր 2011):

-Երբեմն էլ գումարներ է յատկացում եւ վճարում "Ջաւախքի օգնություն", "Արցախի" կամ "Արցախի վերաբնակեցման յանձնախումբ" անւանումների տակ, եւ պարզ չէ թէ ո՞ր մարմինն, անձին կամ կուսակցութեանն է վճարում այդ գումարները, նաեւ չի ներկայացում այդ յատկացումների սպառման զեկոյցագրերը: Միայն 2007 թ. այդ անւանումների տակ վճարւել է "Ջաւախքի օգնություն" 10.000\$, "Արցախի" 24.820\$ եւ "Արցախի վերաբնակեցման յանձնախումբ" 32.000.000. թուման: (ԹԽ 2007թ. Արտակարգ նախահաշիւ)

- Թեհրանի "Սուբերեան" սրահը, թաղի ժողովրդի օգտագործման նպատակով կառուցւել է ազգապատկան 2300 ք.մ. հողատարածքի վրայ, պոլսահայ սպայ հանգուցեալ Վահրամ Սուբերեանի կտակած գումարի եւ Թեմական Խորհրդի (ԹԽ) լրացուցիչ բիւջեով: Սակայն ՀՅԴ-ն իւրացրել է այն: Այն իւրացնելու նպատակով 1981-ին հիմնադրում են "Նայիրի" միութիւնը, սպայ բռնի ուժով ու սին պատճառաբանութեամբ, ՀՅԴ-ին չյարելու գերպատճառով, ժամանակի Թեմական Խորհրդի միջոցով սրահից վտարում են թաղին պատկանող եւ ժողովրդին հարազատ "Հրազդան" միութեանը եւ սրահը տրամադրում է "Նայիրի" միութեանը: ("Փոթորկոտ կեանքի օրերը" Լ.Ահարոնեան էջ 495)

-"Նայիրի" միութեան նախագահը 10 Յունիս 2010-ին "Ալիք" օրաթերթին տւած հարցազրոյցում յայտարարում է, որ ցանկանում են այդ հողամասում սրահին կից բաց տարածքում միութեան համար կառուցել նոր կենտրոնատեղի: Հարց է առաջանում, ինչո՞ւ է ազգապատկան այդ տարածքը,

որի շուկայական մինիմալ արժէքը կազմում է 6,000,000,000 թուման, տրամադրում դաշնակցականամէտ այդ միութեանը, թեմի կանոնադրութեան ո՞ր կէտի համաձայն է կիրառում նման քաղաքականություն: Դեռեւս "Հրազդան" միութեանը սրահից վտարելու ժամանակ ԹԽ-ի ժամանակի նախագահը յայտարարել է. "Թեմական կանոնադրութեան մէջ էլ, եթէ դուք վերցնէք եւ կարդաք... երբեք գրած չի, որ մենք տեղ տանք որեւէ միութեան:" ("Փիւնիկ" շաբաթաթերթ 23 Նոյ.1981) Ի դէպ, անխտիր բոլոր ոչ դաշնակցական միաւորները, անձնաւորությունները եւ կարիքաւոր ընտանիքները գրկւած են այս բոլորից: Թեհրանի "Արարատ Ազգային մարզաւանը" ապօրինաբար իւրացւել է "Արարատ" միութեան իրարայջողող դաշնակցականամէտ վարչությունների միջոցով, որոնց գործունէությունը վերջին շրջաններում ունեցել է աներիչ հետեւանք: Նրանք փոխարէն զարկ տալու սպորտին, լծած են ՀՅԴ-ի քաղաքականութեան իրագործմանը: Արգելում են գաղափարական հակառակորդներից ոմանք, դրանց շարքում Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանի մուտքը մարզաւան, կամ մարզական սրահը անւանակոչում ՀՅԴ-ի գործիչ Վաչիկ Դարաբեգեանի անւամբ: "Արարատ"-ի վաստակաւոր վետերան մարզիկները փնտրած գործիչներ են Իրանեան այլ մարզակումբներում, սակայն գաղափարական հաւատաւորների բերումով տեղ չունեն "Արարատ"-ի վարչություններում:

Թեհրանի Հեշմաթիէ թաղամասի "Էրեբունի", Ջէթուն թաղամասի "Հրազդան", Նադերշահ թաղամասի "Արմէն" միութիւնները վտարւեցին ազգապատկան տարածքներից, արդիւնքում կազմալուծւեցին: Սեփական տարածք չունենալու գերպատճառով կազմալուծւեցին նաեւ Թեհրանում "Մանահին", "Արովեան", "Վանայ" եւ Սպահանի ու Շահինշահի "ԻԱՄՄ" միութիւնները: Ազգային տարածքից եւ նպաստից զրկւած է Թեհրանում լոյս տեսնող քսանամեայ "Արաքս" շաբաթաթերթը: Ցաւօք, այս բոլորը կիրառում է նախօրոք ճշտւած քաղաքականութեամբ: Սպահանի հայոց թեմի 30-րդ ՊԺ-ը որոշում է. "Ազգային բնակարանները տրամադրել այն կարիքաւորներին, որոնք ունեն առողջ նկարագիր եւ գործօն մասնակցութիւն ազգային կեանքում": (30-րդ ՊԺ-ի արձանագրություն էջ 34) Եւ երբ ծանօթանում եւ նոյն ժողովի պատգամաւորներին, նկատում է, որ նրանց աւելի քան վաթսուն տոկոսը դաշնակցականներ կամ "համակիրներ" են, եւ պարզ է նրանց մօտ առողջ նկարագիր ունեցող "դաշնակցականն է", որը իր "գործօն մասնակցութեամբ" ազգային կեանքին, բոլոր ընտրություններում իր ձայնը տալիս է դաշնակցականներին:

Իրանի յեղափոխութեան յաղթանակից յետոյ ՀՅԴ-ի մենատիրութեան դէմ մեծ ցասում ու բողոք առաջացաւ իրանահայ համայնքներում, կազմակերպւեցին բողոքի ցոյցեր ու պտոթկումներ, ժողովուրդը ազգային մարմիններից պահանջում էր հաշիւետւթիւն ու զեկոյց, պահանջում էին արդար ընտրություններ, բողոքողները ցանկանում էին մասնակցի լինել ազգային կեանքին, իրագել լինել անց ու դարձերին, սակայն հանդիպեցին ՀՅԴ-ի բուռն դիմադրութեանը: 14 Մարտ 1979-ին Իրանահնդկաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Կորիւն Ծ. Վրդ. Պապեանի ստորագրութեամբ հրատարակւեց "Միբոյ եւ Խաղաղութեան" անւանումը կրող երկարաշունչ մի կոչ: Սոյն գրութիւնում ժողովրդի արդար պահանջատիրութեան մասին նա գրում է. "... ստեղծել են մեր ժողովրդի մի խումբ մարդկանց մէջ անհասկացողություններ ...մեր ազգային կեանքը խանգարող մի տխուր երեւոյթ" Եւ այն վերագրում է "մութի մէջ գործող ձեռքեր"-ի:

Իրանահայ երեք թեմերի ազգապատկան կալածների ու հարստությունների մասին, հանրութեան տեղեկատւութեան համար ոչ մի աղբիւր գոյութիւն չունի, ժողովրդի միջոցով ընտրած պատգամաւորները տեղեկություն կամ ձեռնահասութիւն չունեն այդ ցանկին: Ազգի իշխանաւորները յայտարարում են. "Ազգային կալածների ցանկը իւրաքանչիւր ՊԺ-ին չի ներկայացում, դրանց վերաբերող կալածագրերը եւ փաստաթղթերը միշտ պահուում են մեր արխիւներում:"

(Իրանահնդկաստանի Հայոց թեմի 28-րդ Պատգ. ժողովի արձանագրություն էջ 19)
Երբ Թեմի բարձրագույն մարմին հանդիսացող ՊԺ-ի անդամներից անգամ թաքուն են պահում կալվածների ցանկը, հետաքրքիր է իմանալ, հապա ռ ր մարմինն է տեղեակ դրանից եւ տնօրինում այն, այսօրեայ պայմաններում ինչո՞ւ եւ ումի՞ց է քողարկում դրանք, ժողովրդի՞ց, թե՛ Իրանի իշխանություններից:

ՆՈՐԱՇԷՆԻ ԿԱԼԻԱՍՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Սկսած 1979 թականից Նոր Ջուղայի վանքապատկան "Նորաշեն" կոչված կալվածները (1856-ին տարածքը 26 ջրիք ("Պատմություն Ն.Ջուղայի" էջ 498)), որ գտնվում է քաղաքի լավագույն հատվածում, գրաւել էր պետական հիմնարկությունների ուշադրությունը, որոնք ցանկանում էին իրացնել դրանք: 9 Մարտի 1984-ին "Քէյհան" օրաթերթում տպագրված հաղորդագրությամբ Սպահանի Գաւառապետարանը յայտարարում է, որ բռնագրաւել է "Նորաշեն" տարածքից 3000 ք.մ., որի համար էլ 1984-ի Օգոստոսին "Սաբթի միջոցով իր անունից ստանում է նոր կալվածագիր:" (Հաղորդագրություն Նոր-Ջուղա 10 Նոյ. 1983 Դիւան Առաջնորդարանի)

Այս բոլորը չեզոքացնելու նպատակով ԹԽ-ը բանակցում էր պետական տարբեր հիմնարկությունների հետ եւ անւանի փաստաբան դոկտ. Օննիկ Սահակեանի համագործակցությամբ դատ էր յարուցել նրանց դէմ: Այս եւ մի շարք այլ ոտնձգությունների պատճառով Նոր-Ջուղայի եւ Շահինշահիի շուրջ 1000 հայերի ստորագրությամբ կազմվեց մի դիմումագիր համախօսական, ուղղւած պետական օրգաններին, որում պահանջում էր յետ վերադարձնել վանքապատկան կալվածները:

Համախօսականի ստորագրողների անունից "Յանձնախումբ" ստորագրությամբ հրատարակւեց մի հաղորդագրություն, որում ասւած է.

"... 1985-ի Յունւարին տյն համախօսականը ստորագրողների կողմից մի նամակ գրւեց ԹԽ-ին, որը ստորագրել էին Ն.Ջուղայից եւ Շահինշահիից 5 անձնաւորություններ, նամակում գրւած էր. "Անցելով եւս այլ հողամասեր կամ բռնագրաւել են ազգային մարմինների կամքից անկախ, կամ էլ վաճառել են նրանց համաձայնությամբ", եւ առաջադրելով մի շարք առաջարկներ, հարցադրել էին "Ի նչ ծրագիր ունեն մեր ազգային մարմինները եղած հողամասերի համար:" ԹԽ-ը նամակին բանաւոր ձեւով պատասխանելու պարտականությունը յանձնարարեց նոյն խորհրդի անդամ Պրն. Ժորժիկ Աբրահամեանին:

ԹԽ-ի խօսնակը մեր պատուիրակներին փոխանցեց հետեւեալը. "Նախ պետք չկայ մտահոգւելու 3000 մետր հողամասի վերաբերեալ եւ կարիք չկար ստորագրություն հաւաքելու, որովհետեւ այդ հողամասերը անպայման կը վերադարձնեն առաջնորդարանին:

-Առաջնորդարանը չունենալով անհրաժեշտ միջոցներ՝ բիւջէ, մասնագէտ, ծրագրող եւ գործադիր ուժեր չի կարող անել աւելին քան անում է: Եւ չի էլ կարծում, որ ուրիշները աւելի լաւ կարող են գործել:

-Առաջնորդարանը կարիք չունի ոչ ոքի, մանաւանդ դիմում կատարողների համագործակցութեանը, որովհետեւ կարծում է, որ դրանց առաջարկները միտումնաւոր են եւ կասկածելի:

-ԹԽ-ը պատասխանատու չի մի քանի անհատների, որոնք իրենց համարում են ժողովրդի ներկայացուցիչ:" Սակայն ցաւօք հակառակ ԹԽ-ի խօսնակի պնդումներին, ոչ միայն այդ 3,000 ք.մ. չի վերադարձւել առաջնորդարանին, այլ 1979-ին դարձեալ նոյն հողատարածքից 8,000 ք.մ. յանձնւել է Իւլ. Մշակոյթի եւ Առաջնորդութեան Նախարարութեանը եւ փոխարէնը ստացւել է Սպահանում մէկ թեմապատկան կալվածի գործառոյթի փոփոխութեան եւ Սպահանի արւարձանում գտնուող Շահինշահի քաղաքում 15,000 ք.մ. մարգա-մշակութային գործառոյթով հողատարածքի տրամադրման ԽՈՍՏՈՒՄ, որոնք եւ չեն իրականացւել մինչեւ 2011 թ. Յունւարի 16-ը: (ԹԽ-ի տեղեկագիր 16 Փետրւար 2010 - 15

Յունւար 2011 էջ 10) Աւելին 32-ամեայ բանակցությունների ու սակարկությունների արդիւնքում խոստացւած 15,000 ք.մ.ը վերաձւել է 7,000 ք.մ.ի բնակարանային գործառոյթով: (ԹԽ տեղեկագիր 10 Փետրւար 2008 - 15 Փետրւար 2009 էջ 7) (Ի դէպ Շահինշահիի մէկ ք.մ. հողատարածքի շուկայական արժէքը հաւասար է 150,000 թումանի, իսկ յանձնւած հողատարածքինը 6,000,000 թումանի):

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՕՐԱԳԻՐ

Նոր Ջուղայի հայկական գերեզմանատան տարածքում, շիրմաքարերից դէպի հարաւ գոյություն ունի հսկայական ազատ հողատարածք: ԹԽ-ը որոշեց այդ հողատարածքում իրականացնել բնակարանաշինութեան ծրագիր, որը իրականացնելու համար անհրաժեշտ էր քաղաքապետարանի համաձայնությունը եւ հողատարածքի մասնատումը: Այդ նպատակով 2002 թ. կատարւած բանակցությունների արդիւնքում, քաղաքապետարանին վճարւել է 247,537,500 թուման: (ԹԽ 2001-2002թթ. հաշւետախտակ սինեակ 26 եւ 2002-2003թթ. տեղեկագիր, էջ 9) Սակայն հողատարածքի մասնատումը չի իրականանում գումարի վճարումից 9 տարի անց: 2009 թ. պարզում է, որ մշակութային ժառանգություն հիմնարկը չի արտօնում նման նախաձեռնութեան իրականացումը: Վճարած գումարը յետ ստանալու աշխատանքների ընթացքում ի յայտ է գալիս, որ քաղաքապետարանին վճարւած գումարը եղել է ոչ թէ 247,537,500 այլ 190,000,000 թուման: (ԹԽ տեղեկագիր 10 Փետրւար 2008 - 15 Փետրւար 2009, էջ 7)

Ո՞ր մնաց հաշւետախտակներում ներկայացւած ծախսած գումարի 57,537,500 թումանը: Եթէ ընդունենք, որ այսօրեայ պայմաններում աշխատանքները իրականանում են յաւելեալ եւ ոչ պաշտօնական վճարումների՝ կաշառքի շնորհիւ, հապա ինչո՞ւ չի իրականանում այն կաշառքը վճարելուց յետոյ եւս: Եւ ինչո՞ւ է 2002թ. նիւթական զեկուցագրում պաշտօնական վճարումը եւ կաշառքը (եթէ այդպիսին է) միատեղւած զեկուցել միեւնոյն անւան տակ: Իհարկէ բարեմիտ լինելու համար պետք է խոստովանել, որ որոշ գործարքներում երբեմն պատահում են նման ձախողություններ, բայց երբ ազգային իշխանութեան համարեա բոլոր աշխատանքներն են ունենում նման ա-ւարտ, այդ դառնում է կասկածելի եւ ունենում կործանիչ հետեւանք, ինչը պատահեց վերը նշւած սցենարի հեղինակի հետ, որը հետագեց ազգային, գուցէ եւ, կուսակցական զբաղեցրած դիրքերից, որը պետք է համարել դրատանքի արժանի, սակայն 30 տարով ուշացած քայլ:

Նոր Ջուղայի հայկական գերեզմանատան արեւելեան անմիջական հարեւան Սպահանի պետական համալսարանը ակամայից կամ դիտաւորեալ գրաւել եւ զբաղեցրել էր գերեզմանատան տարածքից 16.000 ք.մ.: Բանակցությունների անարդիւնաւետութեան պատճառով գործը յանձնւում է դատարան, դատը շահում է ԹԽ-ը, դատավճռում որոշում է յետ վերադարձնել 12.000 ք.մ. առգրաււած տարածքը, եւ երբ ՊԺ-ում հարց է տրւում թէ ինչո՞ւ է 16.000 ք.մ.ի փոխարէն յետ վերադարձւում միայն 12.000 ք.մ. ԹԽ-ի ժամանակի նախագահը պատասխանում է, թէ դա մեքենագրական սխալութեան արդիւնք է, որ դատը յարուցելու ժամանակ թոյլ է տւել մեր քարտուղարը: (Այս տեղեկությունները առկայ են ՊԺ-ների արձանագրություններում, որոնք չեն տրամադրում անգամ պատգամաւորներին: Սպահանի ՀԹ Թեմական եւ Կրօնական Ի-ն-երի տարեկան զեկուցագրերից մէկական օրինակ տրամադրում է պատգամաւորներին:)

Ի դէպ նոյն ԹԽ-ի նախագահը պաշտօնավարում էր Սպահանի պետական համալսարանում: Դատը շահելուց յետոյ էլ նա եւ ... համաձայնեցին, որ առանց վարձատրութեան, այդ տարածքը մնայ համալսարանի տրամա-դրութեան տակ:

ՅՈՎՍԷՓ ՊՕՂՈՍԻԱՆԵԱՆԻ ՀԻՒՆԱԴԱՆՈՅԻ ԿԱԼԻԱՍՆԵՐԸ

Տասնեակ տարիներ է, ինչ փակւել է բարերար Յովսէփ Պօղոսյանեանի 1904 թ. Մարտի 25-ի մարդասիրական կտակով կառուցւած եւ ժողովրդին հսկայական ծառայություն մատուցած

"Յուվեփ Պօղոսյանեան" ազգային հիւանդանոցը: Հիւանդանոցի փակումից տարիներ անց, նրա հսկայական այգին հատեց նորակառոյց մի պողոտայ, հողամասի մնացած հատածը յայտնեց նորակառոյց պողոտայի երկին եւ բազմապատկեց դրա շուկայական արժէքը, որը եւ գրաւեց շատերի ուշադրութիւնը:

2002-2003 տարեշրջանին ԹԽ-ը որոշեց սոյն հողամասի մի հատածում կառուցել 8 յարկից բաղկացած մի համալիր: Շինարարութեան բիւջէի հայթայթման համար ընտրեց ներդնող անձ, որպէս գործընկեր տոկոսային 60- 40 յարաբերութեամբ (ԹԽ 5 Փետրուար 2004-26 Յունուար 2005 տեղեկագիր, էջ 9), որին եւ յանձնեց շինարարութիւնը իրականացնելու պարտականութիւնը: Գործընկերոջ հետ կնքած պայմանագրի անյատակութեան կամ այլ պատճառներով տարբեր անհամաձայնութիւններ առաջացան ԹԽ-ի եւ նրա միջեւ, որոնք առկայ են ԹԽ-ի տարեկան զեկոյցներում: Ի վերջոյ ԹԽ-ը 2007-ին առանց ամփոփելու գործարքից ստացած շահը, կամ վնասը, զեկուցում է, որ աւարտել է շինարարական աշխատանքը եւ հաշուեփակում է կատարել գործընկերոջ հետ: (ԹԽ 21 Յունուար 2006 - 30 Յունուար 2007 տեղեկագիր, էջ 13)

Պատգամաւորական ժողովներից մէկում, մի խումբ դաշնակցական պատգամաւորները խնդիր են յարուցում, որ այդ շէնքի կառուցումը մեծ վնաս է պատճառել ազգային ունեցւածքին եւ պահանջում են հաշուեքննութիւն: Դաշնակցական 3 պատգամաւորների անդամակցութեամբ կեանքի է կոչում քննիչ յանձնախումբ: Մի քանի ամիս անց յանձնախումբը զեկուցում է, որ շինարարութիւնը իրականացել է շատ մեծ վնասով, սակայն չեն հրապարակել վնասի չափը: (Առկայ են ՊԺ-ների արձանագրութիւններում):

Ն. ՋՈՒՂԱՅԻ ՔԼՈՒԲԻ ՊՍՏՈՒԹԻՒՆԸ

1980 թականին Նոր Ջուղայի "Հայոց Ակումբ"(Քլուբ)-ում ոչ դաշնակցականների միջոցով իրականացում էին ժողովրդական հաւաքներ, թատերական ներկայացումներ, կազմակերպում գրքի ցուցահանդէսներ, որոնցից մէկը ենթարկեց դաշնակցականների յարձակմանը, հրի մատնեցին ցուցադրած գրքերը, ծեծի ենթարկեցին պատասխանատուները եւ ի վերջոյ ոստիկանութեան միջամտութեամբ եւ ազգային իշխանաւորների ցանկանալով փականք դրեց դարպասներին, երբ հէնց նոյն ժամանակ համայնքը կարիք ուներ այդ վայրին, ԻԱՄՄ-ի Նոր Ջուղայի մասնաճիւղը, որը վայելում էր մեծ թուով մարդկանց համակրանքը, իր աշխատանքները իրականացնում էր վարձու մի խարխուլ շինութիւնում: Որոշ ժամանակ անց, մի քանի տարով այն յատկացեց Իրան-Իրաքի պատերազմից տուած ընտանիքների ժամանակաւոր բնակութեան համար: Այժմ 30 տարի է, ինչ այդ ազգապատկան մշակութային կենտրոնը չի ծառայում իր կոչմանը: Վերջին տարիներում մէկ միլիարդ թումանից աւելի ծախսերի գնով վերանորոգեց այն: ԹԽ-ի 1 Փետրուար 2002 - 28 Յունուար 2003 միամեայ գործունէութեան տեղեկագրի էջ 11-ում ասւած է. "Սկսել է Ակումբի հիմնական նորոգութեան եւ բարեփոխման աշխատանքը" եւ յայտարարել է, որ "այն ծառայելու է իբրեւ համայնքի անդամների հաւաքավայր ..." իսկ 4 Փետրուար 2003 - 4 Փետրուար 2004-ի տեղեկագրի էջ 6-ում ասւում է որ "որոշեց նրա մէկ յարկը ծառայի որպէս Ազգագրական Թանգարան", իսկ 15 Փետրուար 2005 - 20 Յունուար 2006 տեղեկագրի էջ 9-ում ասւում է "նկատի ունենալով շէնքի ճարտարապետական արանդական ոճը, կատարած նիւթական մեծ ներդրումը, վայրը ծառայեցնել զբօսաշրջութեան առնչող աշխատանքներին:" Այս ընթացքում շէնքի հետագայ օգտագործման համար ԹԽ-ի կողմից յայտարարութիւն է հրատարակել համայնքում առաջարկութիւնների, նախագծերի եւ վարձակալութեան դիմումների ընդունման համար: (ԹԽ 21 Յունուար 2006 - 30 Յունուար 2007 տեղեկագիր, էջ14): Իսկ 10 Փետրուար 2008 - 15 Փետրուար 2009 տեղեկագրի էջ 6 ում ԹԽ-ն յայտարարում է "դիմումների ընտրութեան աշխատանքը ընթացքի մէջ է: Ակումբի պաշտօնական բացումը կատարեց 2008 թականի

Դեկ.26-ին Գերաշնորհ Սրբազան Հօր աղօթքով: (ԹԽ 10 Փետրուար 2008 - 15 Փետրուար 2009 տեղեկագիր, էջ14) 17 Մարտ 2009 - 15 Փետրուար 2010 տեղեկագրի էջ 13-ում յայտարարում է. "Նկատի ունենալով, որ առհասարակ առկայ է Ակումբի առեւտրական արտօնագիր չունենալու պարագան, փորձ է կատարել խնդիրը լուծել այլ շփումներով ու դասաւորութիւններով, սակայն դեռեւս որեւէ յստակ նախատեսութիւն չենք կարող ունենալ հաւանական խոչընդոտների կապակցութեամբ:"

Եւ վերջապէս 16 Փետրուար 2010 - 15 Փետրուար 2011 տեղեկագրի էջ 12 նշում է՝ . "անհրաժեշտ է այն օժտել առեւտրական արտօնութեամբ, որի համար պիտի մեծ գումարներ վճարել քաղաքապետարանին". "...որ Խորհուրդս ի վիճակի չէ Ակումբի խանութները ներկայ կացութեամբ վարձակալութեան յանձնել:" Ի՞նչ ստացեց: Ազգապատկան չքնաղ կալածները ջրի գնով ու ապօրինաբար վաճառեցին, ստացւած գումարից նորոգեցին Ակումբը, Խաչ ու Աւետարանով կատարեցին բացումը, եւ դարձեալ փակեցին այն, եւ հիմա էլ բացելիքաց ասում են "յստակ նախատեսութիւն չենք կարող ունենալ հաւանական խոչընդոտների կապակցութեամբ:" կամ "Խորհուրդս ի վիճակի չէ Ակումբի խանութները վարձակալութեան յանձնել:" Ի՞նչ է, սկզբից չգիտէի՞ն, որ "Ակումբ"-ի հսկայական շինութիւնը չունի առեւտրական արտօնագիր: Նման ծախսատար եւ մեծ աշխատանքները այսպէս չեն իրականանում, նախ տնտեսագետների միջոցով ուսումնասիրում եւ յստակեցում է վայրի օգտագործման նպատակայարմարութիւնը, ապա ըստ քաղաքաշինութեան կանոնակարգի, արտօնւած մասնագետների միջոցով կազմում է շինարարական նախագիծ, որը եւ համաձայնեցւում է քաղաքապետարանի հետ եւ ճշտում պետական վճարումների չափը եւ վճարման եղանակը: Այնուհետ այս ծախսը գումարած շինարարական այլ ծախսերի հետ ներառւում են նախահաշի մէջ եւ մեր պարագայում ներկայացւում ՊԺ-ին եւ հաստատում ստանալուց յետոյ, գործադրում:

Ուրեմն, պարզում է, ինչպէս միշտ, այս պարագայում եւս առանց որեւէ լուրջ ուսումնասիրութեան եւ "հէնց այնպէս" է կատարել այս աշխատանքը եւ միայն ազգային ունեցւածքից հսկայական գումարներ:

8 յարկ համալիրի կառուցման, "Հայոց Ակումբ"-ի նորոգութեան նսեւ Թեմական Խորհրդի այլ նախաձեռնութիւնների ծախսերը հայթայթելու պատճառաբանութեամբ 2001-2002 ժամանակա-հատուածում ՀԱԿԱՌԱԿ ՊԺ-Ի ՈՐՈՇՄԱՆ (առկայ է ՊԺ-ների արձանագրութիւններում) վաճառւում են "Պօղոսյանեան", հիւանդանոցի մասնատուած հողամասերի միանգամից 5 կտորը ընդհանուր 3910,13 ք.մ.:

Ն. ՋՈՒՂԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ՝ ԱՄՍՅԻ

Ն. Ջուղայում գոյութիւն ունեն բազմաթիւ դպրոցական կանգուն շէնքեր, որոնց մեծ մասը կառուցել են բարերարների կտակներից ստացւած գումարներով: Մրանց շարքում են "Քանանեան", "Կատարիներեան", "Արմէն", "Գիշերօթիկ" եւ... հոյասքան շէնքերը:

- 2007-ին որոշում է "Արմէն" դպրոցի բակում կառուցել նոր շէնք՝ "Ն.Ջուղայի Հայոց Ազգային կրթահամալիր" անուն տակ, 3,000 ք.մ. յատակագծով:

Շինարարութիւնը աւարտել է եւ պաշտօնական բացումը կատարել է 2010 թ. Մեպ. 23-ին:

Ի՞նչ է լինելու արանդական դպրոցների ճակատագիրը, ի՞նչ նպատակի պէտք է ծառայեն այդ կառոյցները, որոնք բոլորն էլ կանգուն շէնքեր են, եւ հնարաւոր էր նոր համալիր կառուցելու ծախսի միայն մի քանի տոկոսով արդիականացնել դրանք, որով կը խնայէր ծախսւած գումարի մեծ տոկոսը եւ ճարտարապետական կոթող համարող այդ շէնքերը գերծ կը մնային ապագայի չնախատեսւած վտանգներից կամ բռնագրաւումից:

Այս օրերին, երբ աշխարհի տարբեր երկրներում իրանահայութիւնը մեծ շուքով ու խանդավառութեամբ սօսում է "Քանանեան" եւ "Կատարիներեան" դպրոցների հարիւր ու քանիամեակները, Նոր Ջուղայում սատը քամին մոլգաք

ոնում է նոյն դպրոցների կանգուն ու հիւրընկալ դահլիճներում ու դասարաններում ու տարածում նրանց մտաւարտ մահւան գոյժը: Մնում է ԹԽ-ի մի այլ "կամայ թէ ակամայ" հարողագրութեամբ յայտարարւի դրանց հոգեհանգստեան ու օտարման վերջին արարքը:

ՆԵՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

-Ցաւալի վիճակում են Թեմական Խորհրդի ներդրումները Հայաստանում: Եկամուտ ապահովելու միտումով Հայաստանում գնել են 2 բնակարան վարձու տալու նպատակով, նշանակել են գործակատար, սակայն բնակարանների վարձից ստացւած գումարները չեն փակում գործակատարի աշխատավարձ:

-Հայաստանում գնել են "Ջերմուկ-Բլու" կաթնամթերքային հիմնարկի 49 տոկոսը եւ մինչեւ 2004 թականը վճարել են 120.000 ԱՄՆ դոլար, (ԹԽ 4 Փետրւար 2003-4 Փետրւար 2004 տեղեկագիր, էջ12) բոլոր զեկոյցներում էլ յայտարարում են, որ 51 տոկոսի փայտէր հայաստանի գործընկերը հաշուետու չի իրենց, չի համագործակցում եւ չեն կարողանում վաճառել այն:

"ՄԱՅՆԵՐ ՄԷՅՐ" ՕԴԱՆԱԻՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

-2000թ. Թեմական Խորհուրդը հակառակ համայնքի անդամների կամքին ազգային հնարաւորութիւններով ու յատկացւած տարածքում հիմնադրում է "Մայեր-Սէյր" Օդանաւային գործակալութեան ընկերութիւնը: Չուսումնասիրած այս նախաձեռնութեան 10-ամեայ գործունէութիւնը աւարտւեց մեծ նիւթական վնասներով: Նրա գործադիր տնօրէնը իւրացրեց ընկերութեան գումարների մի մասը եւ խոյս տուց արտասահման: Այս կապակցութեամբ հետաքրքիր է ընթերցել հատուածներ ԹԽ-ի տեղեկագրերից: ԹԽ-ը իր զեկոյցներից մէկում գրել է. "Թում է թէ համայնքի մէջ այդ ուղղութեամբ գոյցներ շատ գնացին, բայց մենք կարծում ենք, որ Թեմական Խորհուրդը ինքը ամենից շատ տեղեկ է դրան առնչակից թերութիւններին ու առաւելութիւններին:" (24 Նոյեմբեր 1999 - 24 Յունւար 2001 տեղեկագիր, էջ 20) Իսկ մէկ տարի անց զեկուցում են, որ ընկերութեան գործադիր տնօրէն Պրն. Ջարեհ Բաբախանեանի շրջանից հեռանալուց յետոյ." ... Թեմական Խորհուրդը հանդիպեց մի շարք անորոշութիւնների "Մայեր-Սէյր" Ընկերութեան հաշիւների ու գործունէութեան կապակցութեամբ:" Որ "յանձնարարւեց ... քննել "Մայեր-Սէյր"-ի ամբողջ հաշուական ու նիւթական գործունէութիւնը:" (30 Յունւար 2001- 31 Յունւար 2002 տեղեկագիր, էջ10)

Եւ դարձեալ մէկ տարի անց յայտարարում են, որ " ... Պրն. Ջարեհ Բաբախանեանի շրջանի ... հաշիւներնութեան աշխատանքը կատարւել է առկայ փաստաթղթերի հիմամբ. քննութեան ընթացքում երեսուն են եկել մի շարք խնդիրներ, որոնց պարզելու հետա-նկարը եւ հնարաւորութիւնը եղած փաստաթղթերի եւ մատենների միջոցով, ցաւօք գոյութիւն չունի ... :"(1 Փետրւար 2002 - 28 Յունւար 2003 տեղեկագիր, էջ14)

-Ի վերջոյ 2009թ. յայտարարում է "...նկատի ունենալով ստացւած զեկուցումները ըստ որոնց թեմապատկան "Մայեր-Սէյր" Օդանաւային գործակալութեան ընկերութիւնը ընդհանրապէս շահաւէտ գործունէութիւն չունի, ... Խորհուրդս որոշում է ընդունել կազմալուծել ընկերութիւնը ...:" (10 Փետրւար 2008 - 15 Փետրւար 2009 տեղեկագիր, էջ12)

Յատկանշելի է, որ այս ընթացքում Պրն. Ջարեհ Բաբախանեանը անդամակցում էր Թեմական Խորհրդին եւ վարում գանձապահի պարտականութիւնները, միեւնոյն ժամանակ նա հանդիսանում էր Թեմական եւ կրթական խորհրդների կապը: (24 Նոյեմբեր 1999 - 24 Յունւար 2001 տեղեկագիր, էջ 1 եւ 2) Այստեղ առաջանում է հարցերի երկար շարան: Ինչո՞ւ էր միայն Պրն. Ջարեհ Բաբախանեանը արժանի ստանձնելու այդ աշխատանքը: Ինչպէ՞ս նա յայտնուեց այդ պաշտօնում: Ո՞վ էր երաշխատրում նրան, եւ ...

-Այս միջադէպից յետոյ ինչպէս միշտ, ոչ մի դատական գործ չարուցւեց, ոչ ոք պատասխանատուութեան չկանչւեց, հրապարակաւ ոչ մի մարմին չդատապարտեց այդ արարքը,

միայն ՊԺ-ի նիստերից մէկում բաւարարւեցին նրան անանէր "վատ ընկեր":

Իրարայաջորդ Թեմական Խորհուրդների զեկուցագրերը լեցուն են, "կարծում ենք", "թում է թէ", "հաշուետու չէ", "անորոշութիւններ", "պարզելու հեռանկար գոյութիւն չունի", "պատասխանատու չէ", "շահաւէտ գործունէութիւն չունի", "ցաւօք", "գոյութիւն", "այլ շփումներ", "մենք ամենից շատ տեղեկ ենք" եւ... բառերով ու ինքնագոհ ու անիմաստ արտայայտութիւններով, պարզում է ամէն ինչը անորոշ է ու յանձնւած բախտի քմահաճոյքին, գոյութիւն չունի ուսումնասիրւած նախագիծ ու գործելաոճ, բացակայում է թափանցիկ նիւթաբարոյական հաշուետուութիւն, եւ ...: Ո՞վ է պատասխանատու այս բոլորի համար, ՊԺ-ն, որն իր անդամների մեծամասնութեամբ, յաճախ անտեսելով առանձին անդամների քննադատութիւններն ու հարցադրումները, կտրօքէն հաստատում է նման ծրագրերը, հաշ-ւեքնիչ մարմինները, որոնց չի ներկայացւում ամբողջական հաշ-ւետուութիւն, Թեմական Խորհուրդների անդամները, որոնք ամենաթանձր մաղումներից յետոյ գաղափարական պատկանելութեան գերպատճառով նշանակւում են կուսակցութեան միջոցով, թէ՛ ինքը կուսակցութեան ղեկավարութիւնը, որը ենթակալ չէ ոչ մի օրէնտրութեան եւ պատասխանատու չէ ոչ մի մարմնի, եւ որի անդամների անանացանկը չի յայտարարում որեւէ տեղ: Դժբախտաբար իրանահայ ազգային կոչւած իշխանութիւնում չկայ պատասխանատուութեան զգացում, այստեղ բոլոր անցուղարձերը ենթակալ են կուսակցութեան կամքին, հայեցողութեան ու թելադրանքին: Իսկ բողոքողների դէմ փակւում են անգամ "Ակումբ"-ների, Մարգարէ"-ների ու "Եկեղեցի"-ների դարպասները:

Թում է թէ այս բոլորի պատասխանատուն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շրջանային կոմիտէն է, որը շրջանում հանդիսանում է թէ՛ օրէնտիր, թէ՛ գործադիր է եւ թէ՛ դատական մարմին:

Մշակույթ

Շայերեն տպագրութեան 500-ամյակին ընդառաջ (1512-2012)

Ակնարկ Հայ Տպագրութեան Պահմանութեան

*Համարդե՛ր
Դոկտոր Էր. Բաղդասարյանը*

*Եթե՛ բոլոր մայրերը այնքան հայրենասեր և ազգասեր լինեն, որ իրենց զավակների հետ մայրենի լեզվով խոսեն, նրանց սրտի մեջ ազգային պատվասիրություն ձգեն, հայրենիքի սեր, էլ այնուհետև ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզ:
Ղազարոս Աղայան*

Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին: Ամեն մի բառը նրա հոգու մի կտորն է: Այդ բառերի մեջ են նյութացած առարկայացած մեր վիշտը, գրկանքները, դառն ու զվարճալի ապրումները, մեր երագները, հույսերը, իղձերը, սերը՝ մեր ողջ ժողովուրդը: ... Նրա համար ծով արյուն են թափել մեր նախնիները:

Ավետիք Իսահակյան

Հայկական գիրը աշխարհի հնագույն և ինքնատիպ այբուբեններից է: Այն ստեղծել է Մաշտոցը 405 թվականին: Դա ժամանակի ու պատմութեան թելադրանքի արգասիք էր, գալիք արհավիրքներին դիմակայելու հայ ժողովրդի հոգևոր զրահը:

Հայ տպագիր գրքի պատմությունը տառապանքների ու զրկանքների, ինչպէս նաև անհաստատի սխրագործութիւնների ու հաղթանակների մի ամբողջ շղթա է, որում իր ուրույն դերն ունի Հայոց Եկեղեցին: Չնայած դարերով

ենթարկված զրկանքներին ու հալածանքներին Հայոց եկեղեցին կարողացել է սատար կանգնել հայապահպանությանն ու հայ ժողովրդի ժառանգությանը և մեզ են ավանդել մշակութային մեծ և անուրանալիորեն արժեքավոր ժառանգություն:

1512 թևականին հայ մշակութային կյանքում տեղի ունեցավ չափազանց կարևոր մի իրադարձություն՝ հայկական տպագրության սկզբնավորումը և առաջին հայ մարդը, ում հաջողվեց Եվրոպայում հիմնել տպարան և հրատարակել հայերեն գրքեր, Ջուղայեցի Հակոբն էր, որն այժմ հայտնի է Հակոբ Մեղապարտ անունով: Սակայն Հակոբ Ջուղայեցու մահից հետո շուրջ կես դար հայերեն գրքեր չեն հրատարակվել: Միայն 1562 թ. Միքայել Սեբաստացի կաթողիկոսի հանձնարարությամբ Աբգար Թոխատեցին իր որդի Սուլթանշահի եւ Ալեքսանդր քահանայի հետ ճանապարհվել էր Հռոմ և այդ ուղևորության արդյունքը եղավ հայկական տպագրության նոր ժամանակաշրջանի սկիզբը:

Հայկական տպագրությունը ունեցել է զարգացման 4 շրջան՝ հնատիպ գրքի (1512–1800), նոր (1801–1920), խորհրդային և սփյուռքահայ (1920–90) և արդի (1990–ից): 1486-ին Բ. Բրայնդենբախը Մայնցում (Գերմանիա) մի գիրք է հրատարակել, որի մեջ առաջին անգամ տպվել է հայերեն փայտափորագիր այբուբեն: Հ.տ–յան առաջին տպագրիչը Հակոբ Մեղապարտն է: Նրա լույս ընծայած գրքերից պահպանվել են 5-ը, անդրանիկը «Ուրբաթագիրքն» է (1512, Վենետիկ)՝ հայ. առաջին տպագիր գիրքը: Հոգևոր և աշխարհիկ բնույթի են Հակոբ Մեղապարտի դարձյալ Վենետիկում տպագրած մյուս գրքերը՝ «Պատարագատետրը», «Աղթարքը», «Պարզատունարը» և «Տաղարանը»:

Հակոբ Մեղապարտի գրահրատարակչ. ավանդները շարունակել են Աբգար Թոխատեցին, Սուլթանշահը, Հովհաննես Տերզնցին: Առաջինը 1565-ին Վենետիկում տպագրել է օրացույց և Սաղմոսարան, ապա տպարանը տեղափոխել է Կ.Պոլիս ու սկզբնավորել այստեղի հայկական տպագրությունը: Սուլթանշահը՝ իր 1579-ին, Հռոմում պատրաստել է տվել տպատառեր, որոնք դարձել են հայկական ամենից ավելի տարածված տպագիր տառատեսակի՝ բոլորգրի նախօրինակը: Հովհաննես Տերզնցին Հռոմում, 1584-ին, Սուլթանշահի տառերով «Տօմար Գրոգորեան» օրացույցը տպագրելուց հետո, անցել է Վենետիկ, ձուլել տվել նոր տպատառեր և հրատարակել մի Սաղմոսարան (1587): XVI դ. հայ տպագրիչների լույս ընծայած գրքերից պահպանվել են 19-ը: 1616-18-ին Հովհաննես Քարմատանենցը Լվովում իր հիմնած տպարանում լույս է ընծայել հայերեն մեկ բժշկարան, երկու Սաղմոսարան. 1636–1638-ին, Նոր Ջուղայում Խաչատուր Կեսարացին ու իր օգնականները պատրաստել են տպատառեր, տպագր. այլ պարագաներ եւ հրատարակել Սաղմոսարան (1638), «Հարանց վարք»(1641), Խորհրդատետր (1641), ժամագիրք (1642): Խաչատուր Կեսարացու գործը շարունակել են Հով. Ջուղայեցին և ուրիշները: 1658–60-ին Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի Մատթեոս իրամանով Մատթեոս Ծարեցին Ամստերդամում հիմնել է Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվամբ տպարանը, 1669-ին տպարանը տեղափոխվել է Լիվոռնո, 1671-72-ին Մարսել: Մինչև 1686-ը երեք քաղաքներ տեսել 41 անուն բարձրորակ տպագրությամբ հայերեն գրքեր: 1685-1717-ին Ամստերդամում գործել է Թովմաս, Մատթեոս, Ղուկաս, Միքայել Վանանդեցիների տպարանը:

Հայ հնատիպ գրքի գլխավոր կենտրոնը եղել է Կ.Պոլիսը (մինչև 1800-ը լույս է ընծայել շուրջ 350 անուն գիրք), ապա Վենետիկը (շուրջ 260 անուն): Կ.Պոլիսում Աբգար Թոխատեցու (1568-69) և Երեմիա Քլոմուրճյանի(1677-78) տպագրական կարճատև գործունեությունից հետո, XVII դ. վերջին, անընդմեջ գործող տպարան են հիմնել Սարգիս Եվրոկացին, Գրիգոր Մարզվանեցին Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին:

Շար. 1

ՎԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

Հեղափոխական դեմոկրատը, փառաբանելով Գարիբալդիի գլխավորած ազատագրական պայքարը, խարազանում է բռնակալությունը: «Ահա մի նոր խրատ մարդկության, — գրում է նա,—մի սոսկալի ապացույց այն բանին, թե բռնակալության արվեստի դժոխային մեքենան հանգչում է անձնասեր և եսասեր ազնվականների ուսերի վրա: Այսուհետև ամեն մի բանական մարդու պարտքն է միօրինակ գարշիլ և զզվել, որպես բռնակալության ուժի պատկերացույցից, նույնպես և նորա շրջանակից և պարագաներից»: Խանդավառված ազատության վեհ գաղափարով, Նալբանդյանն այնուհետև շարունակում է. «Մարդերի իրավունքը և ազատությունը հավասար է. և եթե մինը ավելի ազատություն և ավելի իրավունք ճարեց յուր համար, քան թե նորա ընկերքը ունեին, ասել է թե ուրիշի սեփականությունը գողացավ և հափշտակեց: Մինի առավելությունը պիտի հիմնվի մյուսների աղքատության վերա, ազնվական կացությունը այսօր անարգություն է մարդկության անունին: Ազնվականը բռնաբարելով հասարակ ժողովրդի աստվածատուր ազատությունը և իրավունքը, խլում է նորան սեղանապիղծ ձեռքով, և ուրիշները աղքատացնելով, հարստանում է և տիրապետում է ազգի բանականության վերա: Այս բարոյական ավազակներին մա՛հ բարոյական»:

Նա Իտալիայի օրինակով ցույց է տալիս, որ տիրող ռեակցիայի համար փույթ չէ, «որ արյունաթաթավ Իտալիան ավելի քան կես դար լլկվեցավ եգիպտական չարչարանքի մեջ՝ ազնվականը ցույց է տալիս գործով, որ թե հնար ունենար, ապա ուրեմն անշուշտ խեղդելու էր Իտալիայի նորաբողբոջ ազատությունը դեռևս խանձարուրքի մեջ»: Ուշագրավ է, որ Մ. Նալբանդյանը հաշվի առնելով պատմության դասերը զուգահեռներ էր անցկացնում հայ և ուրիշ ժողովուրդների անցած ուղու պատմական փաստերի միջև և եզրահանգումներ անում: Այսպես, դատապարտելով Իտալիայում ռեակցիայի պաշտպան զինվորական ուժերի ղեկավար մայոր Ֆեռզուլային, գրում է. «Իտալիայի ազատության պատմության մեջ պարոն Ֆեռզուլայի և նրա նըմանների անունները պիտի նույն տեղը գտանին, ինչ որ մեր պատմության մեջ Վասակը, Մեիրուժանը, Կիրակոս քահանան և Վեստ Սարգիսը»:

Ժողովուրդների ազատագրության պայքարի հանընդհանուր և միասնական շղթա ստեղծելու գաղափարը, որի օղակներից մեկն էլ պետք է լիներ Հայաստանը, վաղուց էր զբաղեցնում Մ. Նալբանդյանին: Նա Իտալիայից տեղեկություններ է հաղորդում Հ. Սըվաճյանին, որ իտալական հեղափոխությունը բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրական

պայքարին նոր լիցք է հաղորդել, նրանք հավաքագրում են իրենց ուժերը մեծ նպատակի համար: «Այստեղ կան շատ լեհացիք, — գրում է նա,— և դեռևս օրե օր հավելանում են՝ սլավուն է մի խուլ ձայն, որպես թե նոքա կամին կազմել այստեղ մի զինվորյալ լեհական լեգեոն և պատրաստ և կազմ սպասել մի կրակոտ նշանի...»:

Մ. Նալբանդյանը ազատագրական պայքարի այդ հախուռն շրջանում մտահոգված էր բազմաչարչար հայ ժողովրդի ճակատագրով, նրա պայքարի ու հաղթանակի խնդրով: Վերջացնելով իր նամակը նա գրում է. «Ահա այսքան լուր միայն Իտալիո մասին կարող եմ գրել առ այժմ: Չեմ նախանձում Իտալիայի ազատության, դորա հակառակ, առ ի սրտե ուրախ եմ, սակայն տեսնելով նորա ազատությունը և իմ ազգի տխրությունը, կրծում է սիրտս և այրում հոգիս»:

1848 թ. հեղափոխության ազդեցության տակ ռուս հեղափոխականները արտասահմանում կազմում էին սլավոնական ճնշված ժողովուրդներին թուրքիայի լծից ազատագրելու ծրագրեր: Հատկապես Բակունինի ծրագիրը խնդիր էր դնում միացյալ ուժերով խորտակել ռուսական, ավստրիական և թուրքական միապետությունները, ստեղծել սլավոնական ժողովուրդների ինքնավար պետություններ, որոնք պետք է միավորվեին ընդհանուր ֆեդերացիայի մեջ: Քանի որ այդ մեծ ծրագիրը իրականացնելու համար միայն սլավոնների ուժերը բավական չէին, ապա նրա իրագործմանը պետք է մասնակցեին նաև ուրիշ ազգություններ՝ իտալացիներ, ֆրանսիացիներ, հունգարներ, ռումիններ և այլն:

Որպեսզի այդ ծրագիրը իրական ուժ ստանա, նրա կենսագործումը հանձնվում էր իտալական ժողովրդի հերոս, գեներալ Գարիբալդին: Այդ առումով հետաքրքրական են «Հայաստան» թերթի էջերում դեռևս 1849 թ. տեղ գտած հաղորդագրությունները Գարիբալդի գլխավորած ազատագրական շարժումների մասին: Հատկապես նշվում է, որ Մաձձինին հասարակապետություն հայտարարեց և «ազատության ծառը տնկեց», իսկ նրա թշնամիները Կառիպալտին շարժումներ կը լրտեսեցին: Հայկական մամուլի շատ ուրիշ օրգաններ ևս անդրադարձել և դրական գնահատական են տվել իտալական ազատագրական շարժումներին:

Գարիբալդին ոչ միայն իտալական, այլ բոլոր ժողովուրդների ազատարարի համբավ էր ձեռք բերել: «Ահա սրան էլ Լոնդոնի ռուս վտարանդիները դարձնում էին իրենց ծրագրի իրականացնողը: Իրենց բաժինը նրանք վերցնում էին բունտարարությունը, ժողովուրդներ ապստամբեցնելը, մնացած պատերազմական պատրաստություններն ու գործողությունները հանձնվում էին Գարիբալդին»:

Մ. Նալբանդյանը վրդովմունքով է հիշատակում այն հայ խավարանդներին, որոնք հաճախ հարցնում էին. «Եվրոպայի դեպքերը ի՞նչ վերաբերություն ունենին մեզ, կասեն ինձի մի տեսակ ղոժխադեմ մարդիկ...»: Հետո նալբանդյանը պատասխանում է ռեակցիայի ջատագովներին, նկատում, որ նրանք իրոք արժանի չեն «վերաբերություն ունենալու եվրոպական ազգերի հետ, անցնել այն փրկության կամուրջը, որից անցնում են ուրիշ ազգեր: Վերջապես նա իր բարեկամ Զ. Սրվաճյանին գրած նամակում հեղափոխական մտքեր բորբոքող հետևյալ պատկերավոր համեմատությունն է անում, «էտնան և Վեզուվին ծխվում են. Արարատի հին վուլկանի մեջ մի՞թե կրակ կմնա իսպառ... մահաբեր մտածություն»: Ակնհայտ է, որ Մ. Նալբանդյանը ցանկանում էր, որպեսզի Արարատյան աշխարհն էլ

էտնայի և Վեզուվի նման բորբոքվի հեղափոխական կրակով և հետևի եվրոպային:

1861 թ. Փարիզում հրատարակած «Երկու տողե պամֆլետում նա հայ ժողովրդին կոչ է անում մասնակից լինել համընդհանուր ազգային ու սոցիալական շարժումներին՝ հատկապես նկատի ունենալով Ռուսաստանում 60-ական թվականներին հասունացող գյուղացիական շարժումները: Այդ ընդհանուր շարժման մեջ նա տեսնում էր իր ազգի շահերը. «Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ էլ աքսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնելու մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությանը նվիրել և սրբել մեր արյունով»:

Չնայած Մ. Նալբանդյանի առաջադրած «տնտեսական հեղափոխության» ծրագիրը ուտոպիստական կնիք էր կրում, նրա տեսակետները բնականաբար հանգում էին գոյություն ունեցող դեսպոտիզմը «դիմադրության պողպատե սրերով» տապալելու գաղափարին:

Շար. 10

Սոհեր

Մեր անցած ճամբան

Թ. Ղարախանյան Միրակցի

Շիրազ քաղաքը հարուստ էր իր հրաշալի անցյալով, թագավորական պալատներով, գրականության և փիլիսոփաների դամբարան «Սադիեհ և Հաֆեզիեհ», Թագավորական պարտեզ ԵՐԱՄ ԱՅԳԻ «Բաղե Էրամ», «Մասչեդ Շահե Չերաղ», ամենից ճանաչված Պերսպոլիս թագավորական մատավայր և թագավորական հանգստարան և զերեզմանոց ժայռերի մեջ քանդած «Նաղշե Ռոստամ» անունով: Փիլիսոփայական և Սուֆ-իզմի կենդրոնը հենց Շիրազ քաղաքի հյուսիսային լեռներում դեռ վառվում էր Բաբա-Քուլի դերվիշների բնակարան-աղօթարանը որտեղից Դերվիշներ իրենց դերվիշային զգեստ հագած, սեվ կաղնի փայտից քիսականաման բարակ շղթայով քաշ ընկած ուսից (պարսկերենով կոչվում է) «Քաշթուլ» և սիմվոլիկ բարակ ու լայն ձիու Թամբի նման ուրազը երկաթյա և ոսկեգուն (պարսկերենով ասած) «Թաբարզին» այս քաղաքի լեռներից քաղաք քաղաք շրջապտույտ անելով դերվիշությանը մուրացկանություն կանեին ամեն դուռ խփելիս փիլիսոփայներ «Հաֆեզ»-ի և Նիշաբուրցի «Շեյխ Աթթար»-ի պոեզիա ու աղոթք, փառաբանք Աստծոյ կը-մրմնջային տնացուն օրինելով և ինչ փող ու նվեր որ ստանային կվարդարնային իրենց վայրը, դրանք չքավորներին բաժանելու համար: Այս հրաշալի մարդկային արարումները մենք մեր ազգի մեջ այնպես էլ գոյություն չունի, գուցե Սալմաստեցի ՔԱՎՈՐ ՊԵՏՐՈՍԻ-ն կարող ենք նմանացնել:

Այդ տարիներին Ամերիկյաի կառավարության կողմից մասնագետներ էին հրավիրված (Point 4 անունով) հողագործության զարգացման ծրագրով, եւ հողագործական և անասնապահության նորանոր գիտություններով եւ տեխնիկայով , աշխատում էին Պարսկաստանի Շիրազ քաղաքի շրջակայ գյուղացիների հետ նրանց սովորեցնելու նորանոր սիստեմի ավելի արդյունավետ հողագործական բոլոր մարզերում արդյունաբերական նոր ձև ու մեթոդները: Եւ մեզ Կրթական-Ուսման զինվորների շրջապտույտի էին տանում այդ գյուղերում և մոտիկից ծանոթացնում արդյունավետ մեթոդների հետ:

Այդ հսկա գեղեցիկ եռուն-զեռուն քաղաքում փոքրաթիվ հայությունը կազմվում էր փոքրաթիվ ընտանիքներից: Հոգին լուսավոր Մամուքա գյուղի Տեր ՄԻՆԱՍ քահանա և Տերուհին միայն հայկական եկեղեցին էին պահում շաբաթը մի օր, կիրակի օրերը կարճ պատարագ անում և իրկնապահիները կարճառոտ աղօթքով մոմ վառում և եկեղեցուն շունչ տալիս: Ափսոս շատ ափսոս:
